

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Չյայտարարուած Պոյքոթ՝ «Հայաստան» Հիմնադրամին

Նոյեմբեր 24-ին, Ամերիկայի Գոհաբանութեան օրը տեղի կ'ունենայ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թելեթոն-դրամահաւաքը, որուն ընթացքին աշխարհացրի Հայութիւնը դարձեալ կը համախմբուի սատար կանգնելու եւ մարդասիրական օգնութեամբ իր գորակցութիւնը յայտնելու Արցախի իր քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք դժուարին պայմաններու տակ կառչած կը մնան իրենց հողին ու հայրենիքին:

Այս օրերուն Հիմնադրամը կը բոլորէ իր գոյութեան 30-ամեակը, որ կը նշանաւորէ նաեւ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան տարեդարձը: Իր գոյութեան ամբողջ ընթացքին ան եղած է այն միակ կազմակերպութիւնը, որուն շուրջ համախմբուած է Հայ ժողովուրդը՝ տարածուած աշխարհի տարբեր երկիրներուն մէջ: Մեծ եղած է Հիմնադրամի ներդրումը Արցախի ու նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ ենթակառուցումաշինութեան, առողջապահութեան, ընկերային ծառայութիւններու մատակարարման եւ այլ բնագաւառներու մէջ՝ անկախ անոր հասցէին երբեմնեքեմն քաղաքական նկատարումներով հնչող քննադատութիւններուն:

Վերջերս յայտնի դարձաւ որ, թելեթոնին առթիւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. մերժած է իր հայրական պատգամը յղել՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն: Նոյնը ըրած է նաեւ Մեծն Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Առաջինը: Երկու հայրապետներուն նմանատիպ այս պահուածքը պատահականութեան արդիւնք չի չկրնար ըլլայ եւ ժողովուրդին մօտ կայ այն համոզումը, որ նման վերաբերմունքը համազօր է Հիմնադրամի հանգանակային արշաւը պոյքոթելուն՝ մեկնած քաղաքական նկատարումներէ:

Բոլորիս ծանօթ է երկու վեհապետներուն կեցուածքը Հայաստանի ներկայ իշխանութիւններուն նկատմամբ ու անոնք կը դասուին Վարչապետի հրաժարականը պահանջող փոքրամասնութիւն կազմողներու շարքին: Սակայն, իրենց նմանատիպ քայլով անոնք ոչ թէ կը հարուածեն գործող իշխանութիւններուն, այլ առաջին հերթին Արցախի ժողովուրդին, որուն ճակատագրով մտահոգ-

Ֆրանքոֆոնի Միջազգային Կազմակերպութիւնը Իր Աջակցութիւնն Ու Համերաշխութիւնը Յայտնեց Հայաստանին

Թունուզի ձերպա քաղաքին մէջ կայացած Ֆրանքոֆոնի Միջազգային Կազմակերպութեան (ՖՄԿ) 18-րդ գագաթաժողովին, Նոյեմբեր 20-ին ընդունուած են շարք մը փաստաթուղթեր, այդ շարքին «Ֆրանքոֆոն տիրոջին մէջ ճգնաժամային իրավիճակներու, անոնց յաղթահարման եւ խաղաղութեան ամրապնդման վերաբերեալ» բանաձեւը, որով անդամ-երկիրները իրենց աջակցութիւնն ու համերաշխութիւնը կը յայտնեն Հայաստանին:

Բանաձեւը, մասնաւորապէս, համերաշխութիւն կը յայտնէ Ֆրանքոֆոնի անդամ Հայաստանին հետ եւ այս ծիրին մէջ խորին մտահոգութիւն կը յայտնէ վերջերս տեղի ունեցած ռազմական գարծողութեան (Հայաստանի տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան դէմ Ատրպէյճանի յարձակման), յատկապէս անոր հետեւանքով միջազգային իրաւունքի, տարածքային ամբողջականութեան եւ միջազգային մարդասիրական իրաւունքի խախտումներուն առնչութեամբ:

Կազմակերպութիւնը կը քաջալերէ կողմերը, միջազգային գործընկերներու հետ համատեղ, խնդիրներու բանակցուած, խաղաղ եւ տեւական կարգաւորման ուղղութեամբ առաւելագոյն ջանքերը գործադրել՝ յարգելով միջազգային իրաւունքի, ներառեալ՝ տարածքային ամբողջականութեան եւ միջազգային սահմաններու անձեռնմխելիութեան սկզբունքները՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրութեան եւ կոչ կ'ընէ խստօրէն յարգելու գինադադարը:

Բանաձեւը կ'ընդգծէ նոր մագլցողութեան խուսափելու կարեւոր-



Ֆրանքոֆոնի գագաթաժողովի մասնակիցներուն յուշանկարը

րութիւնը եւ կոչ կ'ընէ լիարժէք իրականացնելու 2020-ի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութիւնը եւ կ'ողջունէ գործադրուող ջանքերը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ ու արդարացի կարգաւորման ուղղութեամբ:

Բանաձեւին մէջ անդրադարձ կայ նաեւ մարդասիրական խնդիրներուն: Կազմակերպութիւնը իր մտահոգութիւնը կը յայտնէ լուծում չստացած մարդասիրական խնդիրներուն առնչութեամբ, մասնաւորապէս ռազմագերիներու եւ այլ պահուող անձերու, ինչպէս նաեւ անհետ կորսուած անձերու ճակատագրին վերաբերեալ:

ՖՄԿ-ն նաեւ մտահոգութիւն կը յայտնէ մշակութային ժառանգութեան ոչնչացման առնչութեամբ եւ իր աջակցութիւնը կը ցուցաբերէ Լեռնային Ղարաբաղ եւ յարակից տարածքներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելութեան իրականացման:

Յաւելենք նաեւ, որ Ֆրանքո-

ֆոնի ձերպայի հռչակագրով կազմակերպութեան անդամ-երկիրները շնորհակալութիւն կը յայտնեն Հայաստանին Ֆրանքոֆոնի գագաթաժողովը վերջին չորս տարիներու ընթացքին նախագահելու համար եւ կը յայտնեն իրենց համերաշխութիւնը Հայաստանին այն անվտանգային մարտահրաւէրներու ծիրին մէջ, որոնց երկիրը կ'առերեսուի:

Մենք Չենք Կրնար Թուրքիոյ Վստահիլ Ամերիկեան Ռազմական Թերմոլոճին. Փալոն



Ամերիկեան «F-16» կործանիչները պէտք է վաճառուին Թուրքիոյ: Այս մասին յայտնած է ամերիկացի գոնկրէսական Ֆրենք Փալոնը՝ դատապարտելով թրքական գինուծի հարուածները Սուրիոյ եւ Իրաքի հիւսիսային հատուածներուն:

«Էրտողանը ումբակոծած է քաղաքացիական ենթակառուցուածքներ, այդ շարքին՝ հիւանդանոց: Ահա եւս մէկ պատճառ, որ ես կ'աշխատիմ արգելափակել «F-16» կործանիչներու վաճառքը Թուրքիոյ: Էրտողանի յարձակման օրինակները ցոյց կու տան, որ մենք չենք կրնար անոր վստահիլ ամերիկեան ռազմական թեքնոլոճին», Թուրքիոյ իր էջով գրած է Փալոնը:

Ալիեւ Փարիզը Կը Մեղադրէ Ատրպէյճանի Դեմ Սադրանք Կազմակերպելու Մէջ

Ֆրանքոֆոնի գագաթաժողովի ծիրին մէջ Ատրպէյճանի դէմ սադրանք կազմակերպուած է, որուն հեղինակը Ֆրանսան էր, յայտարարած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ ելոյթ ունենալով իր գլխաւորած «Ենի Ազէրպայճան» կուսակցութեան 30-ամեակին նուիրուած միջոցառման:

«Այդ սադրանքին հեղինակը Ֆրանսան էր, իսկ հիմա Ֆրանսան կը հովանաւորէ Հայաստանը: Անոնք միմեանց քոյրեր կ'անուանեն, եւ այդ յատուկ կ'ընդգծեն, չնայած կրպային նաեւ իրար եղբայրներ անուանել», հեղինակ է Ալիեւը:

Ատրպէյճանի առաջնորդին խօսքերով՝ Ֆրանքոֆոնի գագաթաժողովը բանաձեւ փոփոխած է ընդունիլ, որուն մէջ Ատրպէյճանի դէմ «իրականութեան չհամա-

պատասխանող» ձեւակերպումներ կային:

«Բոլոր հակաստրատեգիական թեզերը հեռացուած են մեր ընկերներու ջանքերուն շնորհիւ», ըսած է Ատրպէյճանի առաջնորդը՝ առանց յատակացնելու, թէ ինչ թեզերու մասին է խօսքը եւ որոնք են Պաքուին սատարած երկիրները:

Իլհամ Ալիեւը իր ծաւալուն ելոյթի ընթացքին անդրադարձած է նաեւ ՀԱՊԿ-ին, պնդած է, որ այդ կառուցին մէջ Ատրպէյճանը աւելի շատ բարեկամ ունի, քան Հայաստանը: Ատրպէյճանի առաջնորդին խօսքերով՝ Երեւանը չէ յաջողած ռազմական այդ դաշինքը բացասաբար տրամադրել Պաքուի նկատմամբ, քանի որ կազմակերպութեան միւս անդամները չեն տրուած Երեւանի «սադրանքներուն»:

ԼՈՒՐԵՐ

ՔԿ-ի Պարզաբանումը Նիկոլ Փաշինեանի Զարգացնման Շուրջ

«ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Քննչական կոմիտեում վկայի կարգավիճակով հարցաքննուել է», այս մասին Factor.am-ի գրաւոր հարցման ի պատասխան յայտնած է ՔԿ յատկապէս կարեւոր գործերու քննութեան վարչութեան պետ Ռաֆայէլ Վարդանեանը:

Ըստ անոր՝ Փաշինեանը հարցաքննուած է 2020 թուականի Սեպտեմբեր 27-էն Նոյեմբեր 9 ինկած ժամանակահատուածին Ատրպէյճանի կողմէ Արցախի դէմ սանձազերծած պատերազմի ընթացքին ՀՀ բարձրաստիճան պաշտօնատար խումբ մը անձերու կողմէ իրենց պաշտօնէական լրագորութիւնները շարաշահելու ենթադրեալ յանցագործութեան դէպքին առթիւ յարուցուած քրէական գործի շրջանակներուն մէջ:

Քրէական գործը, ըստ ամենայնի, 2022-ի Ապրիլ 13-ին խորհրդարանին մէջ վարչապետի ելոյթին յետոյ զոհուած եւ անհետ կորսուած զինուորներու հարազատներուն բողոքի հետեւանքով յարուցուած գործն է:

«Կարող էինք կանխել պատերազմը, որի արդիւնքում մենք կ'ունենայինք այս նոյն վիճակն, ի հարկէ, առանց զոհերի: Ես ի սկզբանէ ընդունել եմ իմ մեղքն ու պատասխանատուութիւնը թէ՛ պատերազմի եւ թէ՛ պարտութեան համար, բայց չեմ ընդունել ու չեմ ընդունում այն մեղադրանքները,

որ ինձ հասցէագրուած են ընդդիմադիրները 2020 թուականի Նոյեմբերի 9-ից յետոյ՝ մեղադրելով հողեր յանձնելու եւ դաւաճանութեան մէջ»: Այս յայտարարութիւնը վրդովեցուցած էր հարազատները, ինչէն յետոյ անոնք քանի մը օր շարունակ բողոքի արարքներ իրականացուցին Գլխաւոր Դատախազութեան մօտ՝ պահանջելով վարչապետ Փաշինեանը քրէական գործով որպէս մեղադրեալ ներգրաւել, իսկ իրենց՝ զոհուած զինուորներուն ծնողները, այդ քրէական գործով տուժող ճանչնալ:

Ձոհուածներու հարազատներուն դիտարկմամբ՝ սա խոստովանական ցուցմունք էր վարչապետէն, որ անպայման պէտք է ուսումնասիրուի: Ձինուորներուն հարազատները տուժող ճանչցուեցան, սակայն Փաշինեանը մեղադրեալի աթոռին չյայտնուեցաւ:

Դեռ ամիսներ առաջ Հակափոստութեան կոմիտէն Factor.am-ի հարցին ի պատասխան նշած էր, որ վարչապետին մեղադրեալ ներգրաւելու միջնորդութեան լուծումը յետաձգուած է մինչեւ անոր վերաբերեալ որոշում ընդունելու համար էական հանգամանքներու պարզումը: Այս պահին յայտնի չէ, թէ երբ պիտի աւարտի «էական հանգամանքներու պարզումը»-ը, քրէական գործի մասով Քննչական կոմիտէն եւս այլ մանրամասնութիւններ այս պահուն չի տրամադրեր:

Քրէական Զետապնդում՝ Սերժ Սարգսեանի Անվտանգութեան Նախկին Պետին Նկատմամբ

Գլխաւոր Դատախազութիւնը նոր քրէական վարոյթ յարուցած է 2018-ի յեղափոխութենէն յետոյ քանի մը քրէական գործերով անցնող երրորդ նախագահի թիկնազօրի նախկին պետ Վաչական Ղազարեանի եւ անոր կնոջ նկատմամբ:

Այս անգամ մեղադրանքը շորթումն է, որ կ'առնչուի անոնց պատկանող «Եանս» ճաշարանային համալիրին: Բռնութիւն գործարելու սպառնալիքներով առանձնապէս մեծ չափերով շորթում կատարելու յօդուածով երրորդ մեղադրեալը «Եանս»-ի տնօրէնն է: Երեքն ալ ստորագրութիւն տուած են չհեռանալու մասին:

Ըստ իրաւապահներուն՝ չորս տարի առաջ «Եանս»-ի տնօրէնը Վաչական Ղազարեանին ու անոր կնոջ՝ Ռուզաննա Բեկլարեանին յայտնած է, որ համալիրին հաշուապահը յաճախորդներէն ստացած որոշ գումար դրամարկը չէ մուտքագրած: Անոնք ալ հաշուապահին սպառնացած են վտանգել թէ՛ անոր, թէ՛ անոր որդիին կեանքը, եթէ իրենց չվճարէ 40 միլիոն դրամ: Ընդ որում, ըստ Դատախա-



Սերժ Սարգսեանի անվտանգութեան նախկին պետ՝ Վաչական Ղազարեան

զութեան, Ղազարեանը չի շեղուցած է իր պաշտօնը, որ նախագահին թիկնապահն է ու ստացած է գումարը: Հաշուապահը վաճառած է բնակարանն ու ոսկեայ զարդերը, մտերիմներէն պարտք վերցուցած է ու 2017 թուականին փոխանցած է 40 միլիոն դրամը:

Ամբաստանեալներ Քոչարեանի Եւ Գեորգեանի՝ Կաշառք Ստանալու Գործով Դատական Նիստը Զերթական Անգամ Յետաձգուեցաւ



Ռոպերթ Քոչարեանը եւ Արմէն Գեորգեանը դատարանի դահլիճէն ներս

Երեւան քաղաքի Ընդհանուր իրաւասութեան դատարանի մէջ հերթական անգամ յետաձգուեցաւ դատաւոր Աննա Դանիբեկեանի նախագահութեամբ ընթացող 3 միլիոն տոլար կաշառք վերցնելու մեղադրանքով Ռոպերթ Քոչարեանի եւ Արմէն Գեորգեանի գործով դատական նիստը:

Այս անգամ նիստին չէին ներկայացած Ռոպերթ Քոչարեանի 3 պաշտպաններէն ոեւէ մէկը: Պաշտպան Հայկ Ալուսեանը դատարանին դիմումով տեղեկացուցած էր, որ այլ նիստի կը մասնակցի, այն պարագային, երբ այս գործով նիստերը ամէն անգամ նոյն օրը կը նշանակուին, իսկ պաշտպան Յովհաննէս Խուսովեանը դիմում ներկայացուցած էր, որ հիւանդ է՝ առանց բժիշկի թուղթ ներկայացնելու: Դատաւորը Քոչարեանին հարցուց, թէ ինչո՞ւ անոր 3-րդ պաշտպան Արամ Օրպելեանը չէ ներկայացած դատարան, Քոչարեանը հակադարձեց, թէ Օրպելեանը միայն միջնորդութիւն ներկայացնելու ժամանակ կը ներկայանայ: Ըսել է թէ՛ ինք կ'որոշէ իր

աշխատեալածը դատարանին մէջ: Նման պատկեր երեւի աշխարհի որեւէ դատարանի մէջ չէք հանդիպիր:

Դատախազ Գէորգ Պաղտասարեանը յայտարարութեամբ պահանջեց անյարգելի համարել պաշտպաններուն բացակայութիւնը, դատաւոր Աննա Դանիբեկեանը, սակայն, անյարգելի չհամարեց բացակայութիւնները եւ գնահատական չտուաւ դատարանին նկատմամբ ակնյայտ անյարգալից վերաբերմունքին՝ հերթական անգամ յետաձգելով դատական նիստը:

Ըստ մեղադրական եզրակացութեան՝ Ռոպերթ Քոչարեանը իր պաշտօնէական դիրքը օգտագործելով, Սիլվա Համբարձումեանի օգտին գործողութիւններ կատարելու եւ ոչ-տեղական ընկերութեան վաճառելու գործարքին չխոչընդոտելու համար 2008 թուականի Փետրուարին եւ Մայիսին Սամուէլ Մալոյանի օժանդակութեամբ անկէ ստացած է առանձնապէս մեծ չափերով 927 միլիոն դրամին համարժէք 3 միլիոն տոլարի չափով կաշառք:

Ֆրանսան Սերժաժ Ե Զայաստանին Արտայանձնել Սիւնիքի Նախկին Սարգսեան Սուրիկ Խաչատրեանը

Ֆրանսան մերժած է Հայաստանին արտայանձնել Սիւնիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրեանը: Գլխաւոր Դատախազութեան ուղղուած «Ազատութեան» հարցման պատասխանին պարզ կը դառնայ, որ Երեւանը Փարիզէն մերժումը ստացած է մօտ մէկ ամիս առաջ:

Ֆրանսայի Եւրոպայի եւ Արտաքին Գործերու Նախարարութիւնը Հայաստանի արտաքին գերատեսչութեան միջոցով պատասխանած է, որ դեռ հինգ ամիս առաջ դատական մարմինները բացասական կարծիք յայտնած են Խաչատրեանը արտայանձնելու դիմումին վերաբերեալ: Այս որոշման հիմքով դրուած է Արտայանձնման Եւրոպական Ուխտը, ըստ որուն, «Խաչատրեանի արտայանձնումը անոր համար կրնայ ունենալ բացառիկ ծանր հետեւանքներ»:

Թէ ի՞նչ ծանր հետեւանքներու մասին վկայակոչուած է ֆրանսական դատական մարմիններու եզրակացութեան մէջ, Հայաստանի Դատախազութիւնը չէ մանրամասնած:

Փարիզի վկայակոչած ու 1957 թուականին ընդունուած ուխտին մէջ իրաւական ձեւակերպումներէ բացի կայ նաեւ քաղաքական մաս: 3-րդ յօդուածին մէջ կ'ըսուի, որ յանձնում չ'իրականացուիր, եթէ արտայանձնող կողմը յանցագործութիւնը կը ճանչնայ որպէս քաղաքական յանցագործութիւն կամ քաղաքական յանցագործութեան հետ կապ ունեցող: Կամ ալ՝ եթէ կողմը ունի բաւարար հիմքեր՝ համարելու, որ սովորական քրէա-



Սիւնիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրեան

կան յանցագործութեան համար յանձնման վերաբերեալ հարցումը ներկայացուած է անձի ցեղի, կրօնի, ազգութեան կամ քաղաքական կարծիքի հետապնդման եւ պատժման նպատակով:

Հանրապետականի իշխանութեան տարիներուն Սիւնիքի ազդեցիկ մարզպետը, որ յայտնի էր բազմաթիւ քրէական աղմկայարուց պատմութիւններով, կը հետախուզուի 2019-էն: Հայաստանի մէջ գայն կը մեղադրեն պաշտօնական կեղծիքի, վատնման ու լրագործութիւնները անցնելու համար: 2020-ին tert.am-ի հետ զրոյցին, հետախուզող Սուրիկ Խաչատրեան պնդած էր, որ անօրինականութիւններ թոյլ չէ տուած, ըսած է որ բուժում կը ստանայ արտերկրի մէջ, որմէ յետոյ պիտի վերադառնայ Հայաստան:

ԼՈՒՐԵՐ

Հակառակ Զինադադարին, Ատրպեյճան Վերջ Չէ Դրած ՀՀ Տարածքներուն Եկատմամբ Իր Եկրտուններուն Գ Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Ֆրանքոֆոնի գագաթաժողովին ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան, Թունուզի մէջ, Ֆրանքոֆոնի Միջազգային կազմակերպութեան գագաթաժողովին, իր ելոյթին ժամանակ խօսած է Ատրպեյճանի կողմէ Հայաստանի տարածքներու բռնագրաւման մասին, շեշտած է որ Պաքուն խախտած է ՄԱԿ-ի կանոնադրութեան հիմնարար սկզբունքները, մասնաւորապէս, որ եւէ պետութեան տարածքային ամբողջականութեան դէմ ուժ չկիրառելու սկզբունքը:

«Ատրպեյճանի կողմից գործադրուած յարձակումը, որի զօժակ դարձաւ Հայաստանի Հանրապետութիւնը Սեպտեմբերի 13-14-ին, այս իրողութեան վառ դրսեւորումն է: Ատրպեյճանի՝ ոչնչով չարդարացուած եւ չհրահրուած յարձակումը յանգեցրել է Հայաստանի տարածքներին մի մասի բռնագրաւման՝ մահ եւ տառապանք պատճառելով քաղաքացիական բնակչութեանն ու հասցնելով զգալի աւերածութիւններ», ըսած է Փաշինեան:

Սեպտեմբերեան մարտերու ընթացքին հայկական կողմը 200-էն աւելի զոհ ունեցաւ, վերջին տուեալներով՝ 16 զինուոր դեռ անհետ կորսուած կը համարուի: Հարուածներ հասցուեցան Զերմուկին ու 44-օրեայ պատերազմէն յետոյ սահմանամերձ դարձած Սիւնիքի ու Գեղարքունիքի շարք մը բնակավայրերու: Միջազգային ամպլիոնէն Փաշինեան յայտարարած է, որ չնայած հաստատուած զինադադարին, Ատրպեյճանը վերջ չէ դրած Հայաստանի տարածքներուն նկատմամբ իր նկրտումներուն:

«Առերեսուելով նոր սպառնալիքներին՝ մենք ակնկալում ենք, որ միջազգային հանրութիւնն արդար գնահատական կը տայ այսօր մեր երկրում տիրող իրավիճակին՝ դատապարտելով հայկական տարածքի որոշ հատուածների բռնագրաւումը եւ պահանջելով ատրպեյճանական ուժերի վերադարձը նախկին դիրքեր», յայտարարած է Հայաստանի վարչապետը:

Փաշինեան նաեւ անդրադարձած է Ատրպեյճանի հետ խաղաղութեան պայմանագրի կնքման գործընթացին ու Լեռնային Ղարաբաղի խնդիրին:

«Հայաստանն իր հերթին հաստատականօրէն յանձնառու է նպատակ Ատրպեյճանի հետ խաղաղութեան հասնելու պայմանագրի գործընթացին, ինչպէս նաեւ ապահովել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը», շեշտած է վարչապետը:

Փաշինեան հանդիպումները Սիշէլի եւ Թրիւսոյի հետ

54 մշտական անդամ ունեցող Ֆրանքոֆոնի Միջազգային կազմակերպութեան գագաթաժողովին մասնակցելու համար Թունուզ ժամանած էին Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը, Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլը, Գանատայի վարչապետ Ճասթին Թրիւսօն եւ Ֆրանսախօս միւս պետութիւններու առաջնորդները:

Փաշինեան հանդիպած է իր ու Ալիեի բնակչութիւնները Պրիւքսէլի մէջ քանի մը անգամ կազմակերպած Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլի հետ: Ըստ կառավարութեան հաղորդագրութեան, վարչապետը շեշտած է ատրպեյճանական յարձակման հետեւանքներու վերացման, Հայաստանի ինքնիշխան տարածքէն ատրպեյճանական ստորաբաժանումներու անյապաղ դուրսբերման անհրաժեշտութիւնը:

Ատրպեյճանական յարձակման անդրադարձ եղած է նաեւ Փաշինեան-Թրիւսօ հանդիպման ընթացքին:

Գանատայի վարչապետը գագաթաժողովին ընդառաջ Թուրքիայի մէջ գրած էր, որ միւս առաջնորդներուն հետ իր հանդիպումներու ընթացքին ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքներու հարցերէն բացի պիտի քննարկէ նաեւ Ռուսիոյ պատերազմին հետեւանքները սնունդի եւ ուժանիւթային անվտանգութեան վրայ:

Վարչապետ Փաշինեան հանդիպած է նաեւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ: Կողմերը կարեւորած են Հարաւային Կովկասի մէջ կայունութեան եւ անվտանգութեան ամրապնդման ուղղութեամբ քայլերու իրականացումը, միտքեր փոխանակած են Հոկտեմբերին Փրակի մէջ կայացած քառակողմ հանդիպման արդիւնքներուն վերաբերեալ:

Արցախի ԱԳՆ-ն Անընդունելի Կը Համարէ Արցախի՝ Որպէս Հակամարտութեան Կողմի Կարգավիճակը Չեղարկելու Պաքուի Փորձերը

Արցախի Հանրապետութեան Արտաքին Գործերու Նախարարութիւնը յայտարարութեամբ անընդունելի համարած է Արցախի՝ որպէս հակամարտութեան կողմի կարգավիճակը չեղարկելու, իսկ բնակչութիւնները որպէս «խօսակցութիւն Ղարաբաղի մէջ ապրող հայերու հետ» ներկայացնելու Ատրպեյճանի փորձերը:

Յայտարարութեան մէջ նշուած է. «Ատրպեյճանա-ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման անհրաժեշտ եւ առանցքային բաղադրիչներէն է բնակչային լիարժէք ձեւաչափը եւ այդ շրջանակներում ընթացող քննարկումներն ու հանդիպումները:

Այդ ծիրին մէջ կարեւոր ենք համարում ընդգծել, որ Արցախի Հանրապետութեան համար անընդունելի են Ատրպեյճանի փորձերը չեղարկել Արցախի՝ որպէս հակամարտութեան կողմի կարգավիճակը, իսկ բնակչութիւնները ներկայացնել որպէս «խօսակցութիւն Ղարաբաղում ապրող հայերի հետ» եւ Ատրպեյճանի ներքին քաղաքականութեան շրջանակներում ընկած գործընթաց:

Արցախի ժողովուրդը մի քանի անգամ արտայայտել է իր

դիրքորոշումը սեփական ապագայի վերաբերեալ, որը վերահաստատուել է սպիտակ շերտի 30-ին Ստեփանակերտում տեղի ունեցած բազմազարանոց հանրահասարակ:

Արցախի Հանրապետութեան Արտաքին Գործերու Նախարարութիւնը բազմիցս ընդգծել է բնակչութիւններին Արցախի լիիւրամասնակցութեան անհրաժեշտութիւնը եւ ԵԱՀԿ ՄԽ ձեւաչափի՝ որպէս ատրպեյճանա-ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման համար լաւագոյն հարթակի պահպանման կարեւորութիւնը: Մեր տուեալ դիրքորոշումը մնում է անփոփոխ:

Միեւնոյն ժամանակ, Արցախի Հանրապետութիւնը չի հրաժարուում պաշտօնական Պաքուի հետ երկկողմ յարաբերութիւններին եւ հակամարտութեան կարգաւորմանն առնչուող հարցերի քննարկումից: Սակայն, հարկ ենք համարում շեշտել, որ ցանկացած քննարկում ընդունելի կը լինի միայն այն դէպքում, եթէ ընթացանք միջազգայնօրէն համաձայնեցուած ձեւաչափով եւ կողմերի իրաւահաստատութեան սկզբունքի պահպանմամբ

Ֆիլիպ Ռիքըր Բացայայտած Է Ալիեի Հետ Հանդիպումի Մանրամասնութիւնները

ԱՄՆ պետական քարտուղարի՝ Կովկասեան բնակչութիւններու հարցերով աւագ խորհրդակցան, ԵԱՀԿ Միսիքի Ռիքըր անդրադարձած է Սեպտեմբերին Ատրպեյճանի կողմէ Հայաստանի դէմ իրականացուած յարձակման, անկէ յետոյ երկու երկիրներուն միջեւ ընթացող բնակչութիւններու հեռանկարներուն: Ռիքըր թեմային անդրադարձած է ԱՄՆ Մերակոյցի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովին մէջ տեղի ունեցած քննարկման ընթացքին:

«Ես տարածաշրջանին մէջ էի Սեպտեմբեր 13-14-ին տեղի ունեցած ռազմական գործողութիւններուն ժամանակ եւ հանդիպեցայ նախագահ Ալիեի հետ, որպէսզի կոչ ընեմ դադարեցնելու բռնութիւնը: Հայաստանի եւ Ատրպեյճանի ղեկավարներուն հետ իմ հանդիպումները կը գուզարդուէին երկու երկիրներու ղեկավարութիւններու հանդիպումներուն պետական քարտուղար Պիլիքըրի, Ազգային անվտանգութեան հարցերով խորհրդակցան ձեռք Սալիվանի, պետական քարտուղարի օգնական Տոնի Ֆրիտի, ինչպէս նաեւ Պաշտպանութեան Նախարարութեան մեր գործընկերներուն հետ:

Մինչեւ այս պահ մենք կը շարունակենք ջանքերը, եւ ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ այլ գործընկերներ երկիրներու ջանքերը հիմքեր նախապատրաստեցին Հայաստանի եւ Ատրպեյճանի ղեկավարներուն միջեւ հանդիպումներու շարքին համար՝ խաղաղութեան հետ կապուած հարցերը քննարկելու համար:



ԵԱՀԿ Միսիքի Ռիքըրի համաձայնագրի ֆիլիպ Ռիքըր

րէ», ըսած է Ռիքըր:

Ան յաւելած է, որ չնայած վերջին ռազմական գործողութիւններուն, իրենց կ'ոգեշնչէ Հայաստանի եւ Ատրպեյճանի ղեկավարութիւններու մասնակցութեան կողմից խաղաղ գործընթացին: «Ղեկավարները վերջին ամիսներու ընթացքին ԵՄ-ի միջնորդութեամբ քանի մը անգամ հանդիպած են բնակչութիւններու համար, վերջին անգամ՝ Հոկտեմբեր 6-ին, Փրակի մէջ: Փրակի հանդիպումը շնչանակալի արդիւնքի յանգեցուց, որոնք կրնան խաղաղութեան ճանապարհը շարունակելու հիմք ըլլալ: Խօսքը 1991 թուականի Ալմաթիի հռչակագիրը փոխադարձ ճանչնալու մասին է՝ որպէս հիմք սահմանի հարցերը քննարկելու համար, ինչպէս նաեւ ԵՄ դիտորդներ ուղարկելու որոշման մասին է», ըսած է Ռիքըր:

Ստեփանակերտի Մեջ Բացուած Է Ռուսական Կեդրոն. Ներկայ Եղած Է Արցախի Նախագահը

Արցախի Հանրապետության նախագահ Արարիկ Յարուկյանը 19-ին Ստեփանակերտի մեջ մասնակցած է Արցախի իշխանութիւններուն նախաձեռնութեամբ եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ, բարերար Գագիկ Ծառուկեանի հովանաւորութեամբ հիմնադրուած Ռուսական կեդրոնի բացման հանդիսաւոր արարողութեան:



զացման տեսանկիւնէն:

«Ռուսական կեդրոնները բացուած հանդիսանում է հայ եւ ռուս ժողովուրդները բազմադարեայ բարեկամութեան եւս մէկ ակնառու ապացոյց, եւ մեր սերտ համագործակցութեան վառ օրինակ: Արցախում միշտ յատուկ ուշադրութիւն է դարձուել ռուսաց լեզուի ուսումնասիրութեանը, իսկ կեդրոնի բացումն առաւել քան պահանջուած է ներկայ պայմաններում», նշած է Արարիկ Յարուկյանէն:

Նախաձեռնութեան կարեւորութիւնը ընդգծող խօսքով հանդէս եկած են նաեւ հանրային գործիչներ, որոնք համոզմունք յայտնա են, որ կեդրոնը պիտի դառնայ կարեւոր մշակութային եւ կրթական օժախ բոլոր արցախցիներուն համար:

Կը նշուի, որ կառուցին գործունէութիւնը ուղղուած պիտի ըլլայ ռուսաց լեզուի, ռուսական մշակոյթի եւ պատմութեան զանազան ոլորտին մէջ երկխօսութեան եւ սերտ համագործակցութեան զարգացման: Առկայ հարուստ գրքային ֆոնտին շնորհիւ մատաղ սերունդը հնարաւորութիւն պիտի ունենայ նաեւ ուսումնասիրելու ռուս գրողներու ստեղծագործութիւնները:

Արցախի նախագահը կարեւորած է նման հաստատութիւններու գործունէութիւնը մշակոյթի եւ կրթութեան ոլորտին մէջ հայ-ռուսական կապերու հետագայ զար-

Հայաստանը Ունի Շարք Մը Ռազմական Արտադրատեսակներու Յաջորդական Արտադրութիւն. Յակոբ Արշակեան

Ռազմարդիւնաբերական համալիրի, գիտահետազոտական եւ փորձաքոնսթրուքթորական ծրագիրներու ֆինանսաւորումը 2023 թուականին 2017 թուականի համեմատ աճած է 4 անգամ՝ կազմելով աւելի քան 6,8 միլիարդ դրամ: Ազգային ժողովին մէջ 2023 թուականի պետական պիւլտճէի մասին օրէնքի նախագիծի քննարկման ժամանակ այս մասին ըսաւ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Յակոբ Արշակեան:



Ազգային ժողովի նախագահի տեղակալ Յակոբ Արշակեան

իական արտադրութեան մի շարք պատուէրներ կան ընկերութիւնների շրջանում», ըսաւ Արշակեան:

Աժ նախագահին տեղակալը ընդգծեց, որ նմուշները այլեւս փորձնական պատուէրներ չեն, այլ Պաշտպանութեան Նախարարութեան կողմէ իջեցուած յաջորդական պատուէրներ:

«Կարող ենք արձանագրել, որ Հայաստանում այսօր առկայ է մի շարք արտադրատեսակների, այդ թւում՝ անօդաչու թռչող սարքերի, ռատիօլոքացիոն համակարգերի, տեսողական գիշերային եւ ցերեկային դիտարկման համակարգերի եւ մի շարք այլ սպառազինութիւններ, որոնք ստացել են պետական եւ ռազմական փորձարկումներ եւ մատակարարում են», ըսաւ Յակոբ Արշակեան:

Հայաստան Կը Ծրագրէ Երկրորդ Արբանեակը Ուղարկել Տիեզերք



SATLANTIS ընկերութեան Գեորգ Բերկայացուցիչներու մամլոյ ասուլիսը Երեւանի մէջ

Բաց թողնուած առաջին հայկական արբանեակէն բացի Հայաստան կը մտածէ նաեւ երկրորդ արբանեակ տիեզերք ուղարկելու մասին, որ կրնայ ըլլալ հայկական արտադրութիւն: Այս մասին 18 Նոյեմբերին կայացած ասուլիսի ընթացքին ըսաւ ՀՀ բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան փոխնախարար Աւետ Պօղոսեանը՝ անդրադառնալով երկրին մէջ արբանեակաշինութեան զարգացման վերաբերեալ հարցին:

«Տիեզերական ծրագրերը բաւականին երկարաժամկետ պլանաւորման արդիւնք են լինում: Առաջին արբանեակի արձակումը մեզ մօտ ստացուել է շատ աննախադէպ արագութեամբ: Բայց այդ ընթացքում կուտակուած ներուժը եւ ձեռքբերումները մեզ թոյլ են տալիս խօսել այն մասին, որ մենք շատ արագ կ'անցնենք արդէն պետական երկրորդ արբանեակի կազմակերպման, նախագծման աշխատանքներին: Այն առաջի արբանեակից էականօրէն կը տարբերուի ոչ միայն իր տեխնիկական յատկութիւններով, այլ նաեւ այն բանով, որ եւ նախագծման, եւ ամենայն հաւանականութեամբ, համարկման զգալի մասը կարուի Հայաստանում: Այն ոչ միայն կը լինի երկրորդ հայկական արբանեակը, այլ նա-

եւ կը լինի հայկական արտադրութեան առաջին արբանեակը», ըսաւ Պօղոսեան՝ յաւելելով, որ այդ է նպատակը:

Նախարար Ռոպերթ Խաչատրեան նշեց, որ Հայաստանի մէջ SATLANTIS ընկերութեան գրանցումը արդէն նախանշած քայլերէն մէկն էր արբանեակաշինութեան զարգացման ուղղութեամբ:

Միեւնոյն ժամանակ փոխնախարարը վստահեցուց, որ Հայաստանի Հանրապետութեան տիեզերական ծրագիրները կը կրեն բացառապէս իսրայէլ բնոյթ, եւ արբանեակէն ստացուած տուեալները կ'օգտագործուին բացառապէս իսրայէլ նպատակներով, այդ շարքին՝ անվտանգային նպատակներով վերահսկողութիւն իրականացնելու համար:

Ասուլիսին ընթացքին ներկայացուեցան նաեւ երկրագունդի տարբեր կէտերէ առնուած լուսանկարներ, օրինակ՝ Հայաստանի արեւելեան սահմանագծին մօտ գտնուող պատկեր, որ առնուած է 14 Սեպտեմբերին:

25 Մայիսին ԱՄՆ-էն բաց թողնուած է հայկական առաջին արբանեակը: «ARMSAT-1» հայկական առաջին արբանեակը քննութեան դրական արդիւնքներ ցոյց տուած է, ամբողջութեամբ պատրաստ է շահագործման:

Կանանց Եւ Տղամարդոց Թիւի Տարբերութիւնը Երեւանի Եւ ՀՀ Մարզերուն Մէջ

	Կանայք	Տղամարդիկ	Տարբերություն
Լոռի	5458	4542	916
Երևան	5375	4625	750
Շիրակ	5365	4635	730
Տավուշ	5286	4714	572
Վայոց ձոր	5270	4730	540
Կոտայք	5238	4762	476
Արարատ	5191	4809	382
Սյունիք	5179	4821	358
Արմավիր	5155	4845	310
Արագածոտն	5133	4867	266
Գեղարքունիք	5026	4974	52

Հայաստանի Վիճակագրական կոմիտէն հրատարակած է Հայաստանի բնակչութեան վերաբերեալ տուեալներ 2021 թուականի դրութեամբ: Տուեալներէն մէկը կը վերաբերի 10 հազար բնակիչի հաշուով կանանց եւ տղամարդոց թիւի յարաբերակցութեան: Ըստ Վիճակագրական կոմիտէի տուեալներուն՝ ամենամեծ տարբերութիւնը Լոռիի մէջ է, ամենափոքրը՝ Գեղարքունիքի մէջ:

Ես Թերահաւատ եմ, Որ Ատրպէյճանը, Թուրքիան Կամ Ռուսիան Թոյլ Պիտի Տան Հայաստանին Եւ Հայ Ժողովուրդին Ինքնուրոյն Որոշել Իրենց Գակատագիրը ԱՄՆ Ծերակուտական



ԱՄՆ Ծերակուտայի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի ղեկավար Պոպ Մենենտեզը, ելոյթ ունենալով Հարաւային Կովկասի վերաբերեալ լսումներու ժամանակ, խօսած է Ատրպէյճանին ԱՄՆ ռազմական աջակցութեան մասին եւ անդրադարձած է Ազատութեան մասին ակտի 907-րդ փոփոխութեան, յիշեցնելով, որ այն կ'արգիլէ անվտանգութեան ոլորտին մէջ աջակցութիւն ցուցաբերել Ատրպէյճանին, քանի ղեռ վերջինս չէ հրաժարած Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դէմ ուժի կիրառումէն:

«Պետական Քարտուղարութիւնը կրկին ու կրկին բացառութիւն կ'ընէ Ատրպէյճանի համար: Ան 600.000 տոլար խնդրած է Ատրպէյճանի ռազմական պատրաստութեան համար: Ես կտրականապէս դէմ եմ որեւէ օգնութեան այն երկրին, որ չաչտնի է ռազմական յանցագործութիւններով եւ հարեւան պետութեան դէմ յարձակմամբ: Պետական Քարտուղարութիւնը անվտանգութեան օժանդակելու թոյլտուութիւն տուաւ Պաքուի համար Սեպտեմբերին՝ Հայաստան Ատրպէյճանի ներխուժումէն քանի մը ամիս առաջ, ատրպէյճանցիներուն կողմէ անգէն հայ զինուորներու սպանութեան տեսանիւթի յաչտնուելէն քանի մը ամիս առաջ, հայ զինուորներու հանդէպ ատրպէյճանցիներու սեռային

բռնութենէն եւ սպանութենէն քանի մը ամիս առաջ:

Անիմաստ է ըսել, որ ԱՄՆ ռազմական օգնութիւնը չէ ազդած Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ ռազմական հաւասարակշռութեան վրայ: Դուք պէտք է Գոնկրէպին ներկայացնէք բոլոր մանրամասնութիւնները, որ մենք կարենանք գնահատել ԱՄՆ օգնութիւնը Պաքուին», ըսած է ծերակուտականը:

«Ես կ'ողջունեմ ԱՄՆ ներգրաւուածութիւնը տարածաշրջանի գործերուն ամենաբարձր մակարդակով: Կովկասի վրայ վարչակազմի ուշադրութեան պակասը կը բխի Ռուսիոյ շահերէն, ուստի ես կը գնահատեմ այս նոր մօտեցումը: Բայց ես յոյս ունիմ լսելու, թէ ալ ինչ կրնանք ընել խաղաղութեան համար Կովկասի մէջ եւ յատկապէս Հայաստանի վրայ յարձակումներէն յետոյ: Ես թերահաւատ եմ, որ Ատրպէյճանը, Թուրքիան կամ Ռուսիան թոյլ պիտի տան Հայաստանին եւ հայ ժողովուրդին ինքնուրոյն որոշել իրենց ճակատագիրը: Պէտք է երաշխաւորել, որ խաղաղութեան համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի մէջ ցեղային գտումներու պիտի չյանգեցնէ: Սա կը նշանակէ լուծել մարդասիրական ճգնաժամը, պատասխանատուութեան կանչել այս տարածաշրջանին մէջ բռնութիւններու համար պատասխանատուները», ըսած է Մենենտեզ:

Հայաստան Պետութեան Հիմնարար Հարցը

Շարունակուած էջ 2-էն

ներից անդին, որ քա՛ն է իրատեսական այն, որ հնարաւոր է Հայաստանի ժողովրդագրական խնդիրները լուծել ապաւինելով զուտ հայկական էթնիկ ռեսուրսին: Իսկ դա մի պարագայում, երբ մեզ շրջապատող մարտահրաշքներն ու անվտանգութեան սպառնալիքները որքան ռազմա-քաղաքական են, նոյնքան նաեւ հենց ժողովրդագրական՝ մեզ բազմապատիկ գերազանցող վիճակագրութեամբ: Հե-

տեւաբար առաջանում է հարց, թէ որքանո՞վ ենք պատրաստ խնդիրը դիտարկել հենց «յաւելեալ ռեսուրս» ներգրաւելու հնարաւորութեան, ու նաեւ կարողութեան տեսանկիւնից, որքանով ենք պատրաստ գնահատել այդ տեսանկիւնից թէ հնարաւորութիւններ, թէ անշուշտ ռիսկեր, հետեւաբար բաւականին հմուտ ու ռազմավարական պլանաւորմամբ կառավարում պահանջող, Հայաստան պետութեան հիմնարար հարցը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Կոչ՝ Պատասխանատուութիւն Ստանձնելու

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Բոլորս գիտենք Ալատտինի լամբը: Կախարդական հրէջ մը բանտարկուած է այդ լամբին մէջ, որ յարմար կանչը լսելով դուրս կու գայ հրաշքներ գործելու համար: Սակայն երբեմն կը պատահի որ այդ հրաշքները փորձանքաբեր ըլլայ: Փրկութեան միակ միջոցն է հրէջը կրկին բանտարկել իր դուրս սպրդած լամբին մէջ: Եկուր տես որ այդքան ալ դիւրին չէ լամբէն դուրս սպրդած հրէջը կրկին բանտարկել իր եկած տեղը:

Այս պատմութիւնը ընդունելութիւն գտած է աշխարհի զանազան երկիրներու մէջ: Եթէ արեւելքի մէջ ան կը յայտնուի Ալատտինի լամբարով, արեւմտեան մշակոյթի մէջ ալ դուրս կը սպրդի Փանտորայի սնտուկէն: Խորհուրդը ընդհանրապէս նոյնն է: Մենք ենք որ դուրս հանած ենք այդ հրէջը, ուրեմն ստիպուած ենք մեր գործած սխալին հետեւանքներուն հետ առերեսուելու:

Այս օրերուս նման հաշուեչարդարի մը նստելու համար բազմաթիւ առիթներ կան: Ահաւասիկ ամբողջ համայնք մը ըլլալով դէմ առ դէմ ենք մեզ կեղեքող, մեր միասնական հարստութիւնը շահագործող կառույցներու հետ հաշիւ տեսնելու: Բայց հոն եւս կը նկատենք մեզի յատուկ թերութիւններ: Օրինակի համար կը տարուինք կեղծ քաղաքակիրթ վերաբերմունքներէ եւ չենք համարձակիր գողին գող, աւագակին աւագակ ըսելու: Այդ բանը կ'ընենք միայն բամբասանքի բնոյթով: Կը փոխանցենք մեր լսածները իրարու եւ ապա անմիջապէս կը գողնանք «ինձմէ լսած մի' ըլլար» ըսելով:

Այդքանը անգամ բաւարար է գործուած սխալին մեղսակից ըլլալու համար: Բայց կարեւոր եղածը այդ պահուն միայն ու միայն մեր սեփական մաշկը փրկելն է եւ ոչ աւելին:

Թուրքիոյ հայ ժողովուրդը անցեալին մղած բուռն քաղաքական, զաղափարախօսական եւ օրինական պայքարներու հետեւանքով ձեռք բերաւ իր հաստատութիւնները ընտրելու ծառայող համակարգը: Նոյն-

նիակ բացառութիւն մըն է հոգեւոր առաջնորդի, այսինքն պատրիարքի ժողովուրդին ձայներով ընտրուելու իրաւունքը: Սակայն այդ ձեռքբերումը տարիներու ընթացքին այլասերողը, անգործածելի դարձնողը դարձեալ մենք ենք, այդ նոյն սոհմի ժառանգորդներս: Երկար տարիներու ընդհատումէ ետք, երբ առաջին անգամ առիթը գոյացաւ ընտրութեան միջոցաւ մեր կամքը դրսեւորելու, ընտրելու իրաւունք ունեցողներու միայն 20 տոկոսն է որ արժեւորեց այդ իրաւունքը: Այս պահուն հաւանական բոլոր բարեփոխումներու դիմաց թերահաւատ գտնուողները ուղղակի պատասխանատու են տիրող սնանկացումէն:

Եթէ համայնքային հաստատութիւնները ջարամիտներու ձեռքին խաղալիք կը դառնան, այդ ընթացքը կարեւոր է մեր անտարբերութեան: Այդ անտարբերութեան վստահելով է որ Սուրբ Հովհաննէսեանց Եկեղեցւոյ թաղականութիւնը կը համարձակի ընտրութիւնը քողարկել եւ սահմանափակել միայն իր թաղի ցուցակներով:

Այդ տեսակի խարդախութիւնները առաջին անգամ չէ որ կը պատահին: Անցեալին ալ հանդիպած էինք նման զեղծարարութիւններու, որոնց հետեւանքով յանկարծակիի եկած էր ամբողջ համայնք մը, լսելով որ Պալատի Սուրբ Հրեշտակապետ Եկեղեցւոյ թաղական խորհուրդի ընտրութիւնը կատարուած է անցեալ շաբաթ օր: Յաջորդին ոչ ոք առարկեց այս կատարուածին դէմ եւ ինչպէս կ'ըսէ նախագահ էրտողան «Զիաւոր Սկիւտար հասաւ արդէն»: Այսօր ալ պատկերը տարբեր չէ, քանի որ Պիւլիքտերէի թաղականութիւնը նախ փորձած է ընտրութիւն անցկացնել երկուշաբթի օրով ու երբ այդ ծուղակը խանգարուած է, այս անգամ ալ կը փորձէ ընտրութիւնը միայն ու միայն իր եկեղեցւոյ մէջ ընելով արգելք ըլլալ հասարակութեան մասնակցութեան: Ուրեմն այս բոլորի հանդէպ անհրաժեշտ է ժողովուրդի հսկողութիւնը:

«ԱԿՕՍ» Պոլիս

Չյայտարարուած Պոյքոթ՝ «Հայաստան» Հիմնադրամին

Շարունակուած էջ 1-էն

ուած կը ներկայացան ու ամեն օր կը քարոզեն սեր եւ միասնականութիւն: Այս ան պարագաներէն մէկն է, երբ խօսքն ու գործը չեն համընկնիմ գիրար եւ այդ մասին առաջինը պէտք է իմանան վեհափառները իրենք:

Միւս կողմէ, ի՞նչ կ'ընեն «Արցախը ծախած» իշխանութիւնները: Կառավարութիւնը 2022 թուականին Արցախի Հանրապետութեան յատկացուց աւելի քան 300 միլիոն տոլար եւ նոյնքան նախատեսուած է 2023-ի պիւտճեով: Այս գումարներով է որ այսօր կանգուն կը մնան Արցախն ու Արցախահայութիւնը: Թելեթոնի ընթացքին հաւաքուած գումարները կու գան որոշ

բացեր գոցելով բարելաւելու ժողովուրդի կենսավիճակը:

Չյայտարարուած այս պոյքոթը կրնայ ազդել կամ երբեք չազդել հանգանակուելիք գումարներուն վրայ: Սակայն հարցը կը կայանան հոն, որ երկու հոգեւոր հայրերը կը զլանան բարոյական աջակցութիւն ցուցաբերել Արցախահայութեան ու սահմանամերձ շրջաններու ժողովուրդին, որոնք կապին թշնամիին ամենօրեայ կրակներուն տակ:

Մեր խնդրանքը կը մնայ այն, որ երկու վեհափառները հեռու մնան քաղաքականութենէ՝ ձգելով որ, ժողովուրդը ինքը որոշէ թե ո՞վ պէտք է դառնայ Հայաստանի վարչապետը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

www.massispost.com

ԸՆԴՊԻՄՈՒԹԻՆԸ ՄԻՆչԵԼ ՔՈչարեանից Չիրաժարուի, Ոչնչի Չի Հասնի. Ժողովուրդը Վերաբերմունքը Նրա Հանդէպ Չի Փոխել

ՀԵՂԻՆԵ ՍԱՆՈՒԿԵԱՆ

Հժկ փոխնախագահ, Աժ նախկին պատգամաւոր Գրիգոր Յարութիւնեանի կարծիքով՝ խորհրդարանական ընդդիմութիւնը վերադարձել է Ազգային ժողով, որպէսզի պատգամաւորները ներկայ ստանան ու աշխատավարձից չզրկուեն: «Ուրիշ ոչ մի պատճառ չունեն», - ասում է նա:

Դիտարկմանը՝ այսինքն՝ առջեւում Նոր տարին է, գումար է հարկաւոր, դրա՞ համար, Յարութիւնեանն արձագանքում է. «Չգիտեմ՝ ինչ ծախսեր պիտի անեն, գուցէ միտինգների ծախսերը պիտի հանեն: Ո՞վ է իմանում»:

Յիշեցնենք՝ երբ ընդդիմութիւնը փողոցային ակտիւ պայքարի փուլում էր, Յարութիւնեանը մեզ հետ գրոցում ասել էր, որ «Դիմադրութեան» սակաւամարդ շարժումն աւարտուած կարելի է համարել սկսած օրուանից: Եւ եթէ ընդդիմադիրները «բարոյականութիւն ունեն, պէտք է այս քանից յետոյ մանդատները վայր դնեն: Դա կը լինի իրենց՝ քաղաքական իմաստով փրկութիւնը»:

Ընդդիմադիրները յայտարարում էին, որ սեփական օրակարգով են վերադառնալու Աժ, մինչդեռ արդէն մի քանի օր է, ինչ Աժ-ում են, հասցրել են պոչքոթել եկող տարուայ պիւտճէի նախագծի քննարկումները, ձեռնպահ քուէարկել որոշ նախագծերի եւ այլն: Հարցին՝ ո՞րն է այդ սեփական օրակարգը, գրուցակիցն ասում է՝ չենք տեսնում այդ օրակարգը, քանի որ այն գոյութիւն չունի:

«Գոյութիւն չունեցող բանը հնարաւոր է նկատել: Նրանք մինչեւ Քոչարեան Ռոբերտից չհրաժարուեն, ոչնչի չեն կարող հասնել: Հայ ժողովուրդը իր վերաբերմունքը այդ անձի հանդէպ չի փոխել եւ չի պատրաստուում փոխել: Մինչդեռ իրենք Քոչարեանից հրաժարուել չեն կարող», - ընդգծում է նա:

Անդրադառնալով խաղաղութեան օրակարգին, թէ արդեօք մօտ ապագայում հնարաւոր համարո՞ւմ է Ատրպէյճանի հետ հասնել խաղաղութեան համաձայնագրի ստորագրման, վերջինս կարծում է, որ այն շուտ գլուխ եկող բան չէ, քանի որ առկայ են տարբեր շահեր:

«Ատրպէյճանին ձեռք չի տալիս այդ համաձայնագիրը, ինչ խօսք, եւ ամէն ինչ անելու է՝ դա վիժեցնելու համար: Խաղաղութեան համաձայնագրի ստորագրումը լրջագոյն հարց է՝ լիքը խուժերով ու սողանցքներով, եւ դա շատ երկար, ժամանակատար ու խրթին պրոցես է ենթադրում», - ասում է նա:

Խաղաղութեան պայմանագրի ստորագրումը միտումնաւոր վիժեցնելու միջոցով ռազմական նոր էսկալացիայի գնալու հաւանականութեան սցենարը եւս գրուցակիցն անհաւանական է համարում՝ հաշուի առնելով Սեպտեմբերի 13-ի ազբեսիային յաջորդած միջազգային հանրութեան կոշտ եւ հասցէական արձագանքը:

«Ես չեմ կարծում, որ Ատրպէյճանը նորից արկածախնդրութեան կը դիմի եւ նման քայլի կը գնայ, դա իրեն ձեռնտու չէ: Ատրպէյճանի ուզածը, ակնյայտ է, «Մեղրիի միջանցք» ստանալն էր



եւ է, այսպէս կոչուած՝ «Ձանգեզուրի» միջանցքը, բայց յետոյ համոզուեց, որ ոչ մի գերութիւն իրեն այդ հարցում չի աջակցում՝ բացի ՌԴ-ից եւ Թուրքիայից», - նշում է նա:

Խօսելով Պետրոսեանի պատգամաւոր կոնստանտին Զատուլինի յայտարարութեան մասին, թէ «Փաշինեանը ստորագրել է միջանցքը»՝ Յարութիւնեանը կոշտ է ար-

ձագանքում. «Սու՛տ է ասում Զատուլինը, ինքը ստորագրողների կողքերը նստա՞ծ է եղել: Եթէ ՀՀ ղեկավարութիւնը ստորագրել է, ապա թող ցոյց տան՝ որտեղ, երբ ու որ փաստաթղթով: Փաշինեանն էլ պնդում է՝ չի ստորագրել նման բան, եւ չի կարող լինել միջանցք: Թող ցոյց տան Փաշինեանի ստորագրած որեւէ նման թուղթ, այդ ժամանակ էլ ես իմ վերաբերմունքը կ'արտայայտեմ նրա նկատմամբ: Գոյութիւն ունի Նոյեմբերի 9-ի յայտարարութիւն, որտեղ «միջանցք» տերմինը գործածուած է միայն Լազինի միջանցքի դէպքում, եւ այդ մասին քանիցս յայտարարուել է անցած երկու տարիների ընթացքում: Միջանցք չի՛ եղել ու չի՛ լինի, բացառուած է»:

Ըստ նրա՝ այսօր թէ՛ հարեւան իրանը, թէ՛ Հնդկաստանը եւ այլ տարածաշրջանային շահառուներ շահագրգռուած են Հիւսիս-հարաւի կառուցմամբ, ճանապարհների ապաշրջափակմամբ. «Առիթն օգտագործեմ եւ ասեմ, որ ես Մեղրիից Երեւան եմ գալիս, ճանապարհին բաւականին աշխատանքներ

արուել են»:

Ինչ վերաբերում է ՀԱՊԿ երկրների ղեկավարների զագաթաժողովին մասնակցելու համար ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինի ՀՀ առաջիկայ այցին, գրուցակիցը կէսկատակ ասում է. «Բա պիտի գայ, իհարկէ, զագաթաժողովի շրջանակներում է այցը: Ուրիշ տեղ չի գնում, էստեղ է՞լ չգայ»:

Անդրադառնալով այցին ընդառաջ ՀՀ-ում առկայ տրամադրութիւններին, կարծիքներին, թէ՛ մեր երկիր է գալիս «մարդասպան ղեկավար», եւ դեմոկրատական Հայաստանի անունը ողջ աշխարհում հոլովուելու է այդ՝ քաղաքակիրթ աշխարհի մերժած մարդու անուն կողքին՝ Յարութիւնեանն անմիտ, յիմար խօսակցութիւններ է որակում դրանք:

«Այսօր Արցախում ո՞վ է երաշխաւորում տեղի բնակիչների անվտանգութիւնը: Չեմ ասում՝ ճիշտ էր կամ սխալ էր այն ամէնը, ինչը բերեց-հասցրեց սրան՝ խաղաղապահների տեղակայմանը, բայց եկէք



TOY DRIVE COMEDY NIGHT

DECEMBER 3rd

COMEDY FOR A CAUSE
TOY DONATION REQUIRED FOR ADMISSION



MICHAEL GREGORIAN



MIKE BLACK



MARY BASMADJIAN



MICHAEL PASSION



WILLIAM LEONARD



JOHN DIRESTA



STEPAN HOVAGIMIAN

ALL TOYS TO BE DISTRIBUTED TO THE CHILDREN OF ARTSAKH

ArmenianCouncil.org/ComedyNight

RESERVE YOUR
TICKETS ONLINE



VIP SEATING
AVAILABLE

**DOORS OPEN
AT 7P.M.**

18+

1060 N. Allen Ave Pasadena, CA 91104

Լիբանանի Սէջ Նշուեցաւ «ՏիտուՆի» Ուսանողական Եւ Երիտասարդական Միութեան 70-Ամեակը



«Մեր գլխաւոր նպատակն էր նոր սերունդը մասնակից դարձնել միութեան կեանքին, դաստիարակել հայրենասիրական շունչով, նկատի առնելով այդ օրերուն տիրող ընկերային ծանր վիճակը»:
«ՏիտուՆի» Ուսանողական Երիտասարդական Միութեան հիմնա-

ամեակի տօնակատարութեան իր բացման խօսքին մէջ, միութեան անդամներէն Ընկ.հի Քաթիա Պոյաճեան նշեց, որ այս սոսկ հանդիսութիւն մը չէ, այլ առիթ մը՝ վերջիչելու անցեալը, գնահատելու մեր նախնիներուն գործը, խօսելու ներկային մասին եւ ծրագրելու



դիրներէն Ընկ. Գրիգոր Շիմշիրեան այսպէս բնութագրեց միութեան նպատակները, պատմելով թէ ինչպէս համախմբած են պատանիներն ու երիտասարդները՝ անոնց համար կազմակերպելով հաւաքներ, դասախօսական երեկոյթներ եւ դաստիարակչական այլ ձեռնարկներ: «Այդպիսով, մենք ունեցանք հայրենասէր տիպար երիտասարդներ, որոնք հետագային շարունակեցին իրենց ծառայութիւնը՝ դառնալով կուսակցական ղեկավարներ», շարունակեց Ընկ. Շիմշիրեան, խօսելով միութեան հիմնադրութեան 70-ամեակին առթիւ կազմակերպուած տօնակատարութեան ընթացքին, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 11 Նոյեմբերի երեկոյեան, Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոյեճի «Արմէն եւ Բերսաբէ ձէրէճեան» սրահին մէջ, ներկայութեամբ միութեան անդամ ուսանողներու եւ երիտասարդներու, վեթերան տիրուներու եւ հիւրերու:

ապագան՝ յանձնա ուս մնալով հիմնադիրներու սկզբունքներուն: Անոր խօսքով, «ՏիտուՆի»-ն պիտի շարունակէ անշա հախնդրօրէն ծառայել ժողովուրդին ու հայրենիքին:
Միութեան պաշտօնաւարտ

վարչութեան ատենապետ եւ Ս.Գ.Հ.Կ նորընտիր վարիչ Մարմինի ատենադպիր Ընկ. Տիգրան Միհրանեան ընդգծեց տիրուներու սկզբունքներն ու արժանիքները՝ մասնաւորաբար անշահախնդիր ծառայութիւնը, հայրենասիրութիւնը եւ հոգատարութիւնը, որոնք վերստին շեշտուեցան անցնող քանի մը տարիներուն, երբ Լիբանան կը բոլորէր առողջապահական, ապահովական, տնտեսական եւ ընկերա-

տեսանիւթեր, որոնց ընդմէջէն հանդիսատեսներուն ցուցադրուեցաւ միութեան անցած 70-ամեայ ուղին, ինչպէս նաեւ արտերկիր փոխադրուած վեթերան միութեան կաններու վկայութիւններն ու մաղթանքները:
Երիտասարդներուն անունով խօսեցաւ Ընկ. Նարեկ Ղարիպեան, որ դիտել տուաւ, թէ հակառակ այսօր ստեղծուած նոր իրավիճակներուն եւ բացմացած մարտահրա-



չին դժուարին օրեր: «Եթէ ոմանք նոյնիսկ կասկած ունէին, ապա մենք ապացուցեցինք, որ ծառայասիրութիւնը լոկ լոգունգ մը չէ, այլ՝ իրական յանձնառութիւն: Մասնաւոր համաճառակի եւ Պէյրութի նաւահանգիստի պայթումի դաժան օրերուն, տիրուներուները նոյնիսկ վտանգելով իրենց ընտանիքները կառչած մնացին ժողովուրդին աջակցելու սկզբունքին եւ հայաշատ թաղերուն մէջ տունտուն, ըն տանիք առ ընտանիք օգնութեան ձեռք երկարեցին մեր հայրենակիցներուն», ըսաւ Ընկ. Միհրանեան՝ հաւաստիացնելով, որ տիրուներուները չի կրնար շեղիլ այս սկզբունքային ուղիէն:
Միութեան հիմնադրութեան 70-ամեակին առթիւ տիրուներուները արտադրած էին յատուկ

ւերներուն, տիրուներուները ամէն տեղ կը գտնուին պայքարի առաջին ճակատներուն վրայ՝ կատարելով իրենց սրբազան առաքելութիւնը, միշտ կառչած մնալով 135-ամեայ կուսակցութեան պայքարի ժառանգութեան:
Հանդիսութեան ընթացքին խաժակ խաչատուրեան Չութակով երաժշտութիւն մատուցեց, իսկ տիրուներուներու Փաթիլ Փափագեան հանդէս եկաւ ասմունքով:
Ս.Գ.Հ.Կ Լիբանանի շրջանի նորընտիր վարիչ Մարմինի ատենապետ, վեթերան տիրուներուներու Ընկ. Վանիկ Տաղեսեան «Արարատ»-ին պատմեց միութեան շարքերէն իր ծառայութեան տարիներուն եւ անոր յարկին տակ դաւա-

Շար.ը էջ 16

HOMENMEN
Ladies Auxiliary invites you to
CHRISTMAS
DINNER DANCE PARTY
CELEBRATE THE SEASON WITH DJ & SALSA DANCE
HOLIDAY SPIRITS
SATURDAY, December 17TH AT 7:30PM
Location: 1060 N. ALLEN AVE., PASADENA, CA 91104
Donation \$100
For more information, please call Karine (818) 324-0574, or Lena (626) 485-6434

Հիմնադիր սերունդի մէկ այլ անդամ Ընկ. Անդրանիկ Գազանճեան իր կարգին հաւաստիացուց, որ 70 տարի առաջ նման միութիւն մը հիմնադրելու գաղափարը տասնամեակներու ընթացքին բացառիկ ձեւով արդիւնաւորուած է, նոյնիսկ հատելով Լիբանանի սահմանը եւ նման կառույցներ ստեղծելով այլ երկիրներու մէջ եւս: Ընկ. Գազանճեան նաեւ յատուկ դրուատեց ներդրումը այդ օրերու կուսակցական ղեկավարներուն, որոնք նեցուկ կանգնեցան միութեան հիմնադրութեան աշխատանքին: 70-

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ, ԿԻՐԱԿՈՍ Սրահ
2215 E Colorado Blvd., Pasadena, CA 91107

Հիւրասիրութիւն Մուտքը Ազատ

Սաթամեանի Թատերական Ուղին



«Թատերական Ուղեւորութիւնս. Յուշագրութիւն մը»
Գրիգոր Սաթամեան, Լոս Անճելէս 2021

ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐ ՄԻՍՈՆԵԱՆ

60 տարի բեմին վրայ: Այսինքն համակ կեանք մը լուսարձակներուն տակ: Եւ ութսունի սեմին, պսակաձեւ ժահրի համատարած համաճարակին պարտադրած տարուան մը տնային բանտարկութեան ընթացքին, Գրիգոր Սաթամեան հաշուեյարդարի կը նստի ինքն իրեն հետ:

Եւ ահա՛, ընթերցողին սեղանին վրայ է «Թատերական Ուղեւորութիւնս. Յուշագրութիւնս մը» շքեղ հատորը: Հերրի Մեսրոպեանի արուեստի իմբազրութեամբ, հատորը լոյս տեսած է սրճասեղանի արուեստի գիրքերու եղանակով՝ հորիզոնական ծաւալով, բազմաթիւ բարձրորակ լուսանկարներով, երկպիսիակ գրութեան դասաւորումով: Գեղեցիկ մտալցացում մը, որ մտերմիկ ու անմիջական մթնոլորտ մը կը ստեղծէ եւ ընթերցողը ներս կը հրաւիրէ մասնակցելու այս ուղեւորութեան:

Ինչո՞ւ կենսագրութիւնը ժողովրդական է: Պարզ է՝ հանրաճանաչ մարդոց անձնական կեանքը կը շահագրգռէ զանգուածները: Մարդիկ յաճախ կը շփոթեն զերասանն ու իր մարմնաւորած կերպարը: Շատեր կը զարմանան թէ այսինչ սարսափելի դերը վերցուցած անհատը որքան ազնիւ է իրական կեանքի մէջ, կամ հակառակը: Բնականաբար մարդուս կը հետաքրքրէ հանրածանօթ անձերու կեանքին ծալքերը: Կ'ուզենք գիտնալ թէ լուսարձակները մարելէն ետք ի՞նչ կ'ընեն անոնք: Կ'ուզենք թափանցել անոնց մտերմիկ կեանքի խորհուրդներէն ու ապրումներէն ներս:

Տաղանդը բնածին է: Մարդիկ կան որոնց նախախնամութիւնը տաղանդով օժտած է: Նոյն ծնողներու զաւակները, նոյնիսկ երկուորեակ, տարբեր տեսակի եւ ծաւալի տաղանդներ կ'ունենան, ի յեճուկս նոյնաման գուրգուրանքին, դաստիարակութեան եւ խնամքին: Հոյակապ մարգիկներու եւ ախոյեաններու, խոհուն գիտնականներու, հմուտ մտաւորականներու, փայլուն զրագէտներու քոյրերն ու եղբայրները շատ անգամ նոյնքան օժտուած չեն: Սակայն տաղանդը ինքնին միայն կարելիութիւն մըն է: Դիպուածն ու բախտը, ճիգն ու հետեւողականութիւնն են որ կ'իրագործեն զայն: Բոլորս ալ լսած ենք որոշ անձերու մասին թէ՛ «եթէ աս տղան ուսում առած ըլլար...», կամ

«եթէ աս աղջիկը ծոյլ չ'ըլլար...»: Այդպէս ալ, երբ աստղերը բարենպաստօրէն դասաւորուին՝ տաղանդ, բախտ, ճիգ, դիպուած միացած ծնունդ կու տան հանճարի: Այս գիրքը պատմութիւնն է տաղանդէն հանճարի այդ անհաւանական գործընթացին:

Գրիգոր Սաթամեանի հետ ճամբայ կ'ելլենք Կիլիկիայէն՝ իր ծնունդէն շատ առաջ: Հակիրճ այց մը դէպի հօրենական եւ մօրենական ակունքները, տարագրութիւնը եւ Լիբանանի քաղաքական կազմաւորումը որպէս երկիր, կը պատրաստեն հեռանկարը ուր կը ծնի եւ հասակ կ'առնէ մանուկ հեղինակը: Մայրը «լաւ դպրոցի» մը մասին լսած ըլլալով, Հ.Բ.Ը.Մ.-ի Յովակիմեան-Մանուկեան տղոց երկրորդական վարժարանը կ'արձանագրէ գինք:

Յովակիմեան-Մանուկեան վարժարանը Սփիւռքի ամենաբեղուն հաստատութիւններէն էր: Բարեգործականի ամենէն բազմադիրս իրագործումներէն է Մելքոնեան հաստատութեան կողքին: Խումբ մը տեսիլքի մարդիկ՝ բարերար, վարժապետ, նուիրեալ ազգային՝ Բարեգործականի հովանիին տակ ճամբայ հանեցին այս բացառիկ հաստատութիւնը որ բախտորոշ դեր ունեցաւ Սփիւռքահայ կեանքի զարգացումին ու վերելքին մէջ: ՀԲԸՄի ամբողջական վստահութիւնն ու նեցուկը ունենալով, պարոն Արա Թովիմեան իր շուրջ հաւաքեց այն օրերու ամենակարող ուսուցիչները եւ իր մօտ հասած անհաւասար պատրաստութեամբ եւ յաճախ անտաշ տղոցմէ փայլուն սերունդներ կերտեց:

Տնօրէն պարոն Արա Թովիմեանի խստապահանջ դաստիարակութիւնը բախտորոշ դեր կ'ունենայ պատանի Գրիգորին հոգեմտաւոր աճումին մէջ: Յովակիմեանի տարիները «կեանքիս ամենակարեւոր տարիներն էին», կը գրէ Սաթամեան, եւ կ'աւելցնէ՝ «առանց այդ դպրոցի կըթուրեայ, պիտի չ'ըլլայի այն մարդը որ եմ այսօր»:

Յովակիմեանի մէջ կ'աշակերտէ Օննիկ Սարգիսեանի, Ջարեհ Մելքոնեանի, Վահէ Վահեանի, Գերսամ Ահարոնեանի եւ այլ մտաւորականներու փաղանգի մը, որոնք իր մէջ կը կերտեն անհատականութիւն, դատողութիւն, ինչպէս նաեւ հայերէնի եւ արուեստի նկատմամբ խորունկ սէր:

Նոյն դպրոցական տարիներ-

ընէ և որ՝ պարզ դիպուածով մը, Սաթամեան քայլ կը նետէ թատրոնի աշխարհ: Դասընկեր մը կը համոզէ Գրիգորը որ աշակերտական ներկայացման մը մէջ մանր դեր մը վերցնէ: Ամչկոտ ու հանդիսատեսէն սարսափող տղան դժուարութեամբ կը համոզուի եւ դողալով բեմ կ'ելլէ: Ներկայացումը յաջողութիւն մըն է: Տնօրէն Թովիմեան մեծ ժպիտով կը մօտենայ, ձեռքը Գրիգորի ուսին կը դնէ, գնահատական խօսքեր կ'ըսէ եւ կը յանձնարարէ որ շարունակէ: «Տնօրէն Թովիմեանի ձեռքը ուսիս վրայ կախարդական ցպիկն էր», կը գրէ, «այդ օրէն ի վեր չեմ դադրած դերասանութենէ»:

1959ին կը հիմնուի Հ.Բ.Ը.Մ.-ի Վահրամ Փափագեան թատերախումբը եւ Գրիգորը տարի մը ետք կը միանայ անոր: «Բեմադրիչ Պերճ Ֆաղեանը եղաւ թատրոնի իմ առաջին ուսուցիչս եւ ես դերասանութեան մասին շատ բան սորվեցայ իրմէ», կը գրէ Սաթամեան:

Պէյրութի Ամերիկեան Համալսարանի (AUB) մէջ տնտեսութիւն կ'ուսանի, միեւնոյն ժամանակ մասնակցելով դպրոցական ներկայացումներու որպէս բեմադրիչ եւ դերասան: Կը միանայ նաեւ Լիբանանեան ժամանակակից թատրոնին եւ բեմ կ'ելլէ Ֆրանսերէն, արաբերէն, անգլերէն եւ հայերէն դերերով:

AUB-ն աւարտելէն ետք Լոնտոն կը մեկնի դերասանութիւն ուսանելու: Հոն թէ՛ ուսուցիչները եւ թէ՛ մամուլը կը գնահատեն իր տաղանդը: Լոնտոնի տարիներու փորձառութիւնը կը կազմաւորէ արհեստավարժ թատրոնի մարդը: 1968ին Լիբանան կը վերադառնայ, ուր հայ եւ օտար թատերական կեանքին մէջ աշխույժ դէմք մը կը

դառնայ, միեւնոյն ժամանակ դասաւանդելով AUB-ի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի վարժարաններուն մէջ:


1972ին Սաթամեանի գլխաւորած Հ.Բ.Ը.Մ.-ի Վահրամ Փափագեան թատերախումբը առաջին սփիւռքահայ միաւորն էր որ Ս. Հայաստան հրաւիրուեցաւ: Անոր երեք շաբթուայ շրջապտոյտը մեծ յաջողութեամբ պսակուեցաւ ժողովուրդին ու քննադատներուն կողմէ: Հոն է որ վաստակաշատ Վահրամ Աճեմեանը, տպաւորուած Սաթամեանի տաղանդով, կ'առաջարկէ որ Հայաստան մնայ եւ Սունդուկեանի միանայ որպէս դերասան եւ բեմադրիչ: Սակայն Թատերախումբի պատասխանատուներէն Օննիկ Սարգիսեան դիտել կու տայ թէ Հայաստան արդէն հարուստ է պատրաստուած արուեստագէտներով, մինչ Սփիւռքը շատ աւելի կարիք ունի իր տաղանդին: Համոզուած, Սաթամեան կ'որոշէ Սփիւռքի մէջ շարունակել իր ասպարէզը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմը տակնուվրայ ըրաւ այդ դրախտային երկիրը: Ստեղծուած շփոթութեան մէջ արուեստ եւ թատրոն կանք առին բնականաբար: Սակայն անհաւատալիօրէն, այդ անորոշութեան մէջ, Սաթամեան Փափագեան թատերախումբը Եւրոպա յաջող շրջապտոյտի կ'առաջնորդէ: Յետոյ կը սկսի իր ողիսականը. նախ Անգլիա կ'անցնի, ապա Նիւ Եորք, ուր ամերիկեան թատերախումբերու հետ կը բեմադրէ զանազան ներկայացումներ արժանանալով քննադատներու գնահատանքին: Սակայն ամերիկեան բեմերու խոստմնալից ճանապարհէն կը շեղի երբ՝ անսալով

Շար.ը էջ 19



ԹԵԲԷՄԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
75-ԱՍԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱԲ



**ԳՐԱԿԱՆ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ՅԱՅՏԱԳԻՐ**
ՆՈՒԲՐՈՒՄՑ
ՀԱՅ ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ
**ԵՂԻՇԷ
ՉԱՐԵՆՑԻ**
ԾՆՆԴԵԱՆ
125-ԱՍԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԻՆ

Տեղի կ'ունենայ՝
ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 2022
Երեկոյեան ժամը 7:30-ին

ԹՄՄ ՊԵՇԿԷՕԹԻՒՐԵԱՆ ԿԵՂԻՈՆ
1901 N. Allen Ave., Altadena, CA 91001

Մուտքը ազատ Հիրասիւրուփին

**Այս Ձեռնարկը Կը Հովանաւորէ
Թ. Մ. Միութեան Լոս Անճելէսի Մասնաճիղը**

«Զարգացնենք Հնարաւորութիւնները». «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Ֆոնեթոնը՝ Ֆրանսայի մէջ



Ամէն տարի՝ աշնան այս շրջանին, «Հայաստան» համահայկական հիմնադրամը կը սկսի ֆոնեթոնը: «Զարգացնենք հնարաւորութիւնները»... այս խորագրով հիմնադրամի ֆրանսայի տեղական մարմինը Նոյեմբեր 17-20-ը դրամահաւաք կ'իրականացնէ՝ տասնեակ կամաւորներ արդէն երրորդ օրն է, որ կը պատասխանեն հեռախօսազանգերուն, կը ներկայացնեն հիմնադրամի ծրագիրներն ու կ'առաջարկեն միանալ դրամահաւաքին:

«Այս տարի մեր ծրագիրները կեդրոնացած են սահմանամերձ գիւղերուն վրայ, Հայաստանի մէջ՝ Սիւնիք, Տաւուշ, յոյսով ենք՝ Գեղարքունիք, նաեւ Արցախի մէջ: Աւելի զարկ կու տանք գիւղատնտեսական ծրագիրներուն՝ գիւղացիներուն կարիքները հոգալու, օգտակար ըլլալու համար»... Պետրոս Թերզեան, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի անդամ:

Այս տարիներուն ընթացքին հազարաւոր գիւղացիներ օգտուած են ու կ'օգտուին հիմնադրամի տրամադրած սարքաւորումներէն, իրականացուած ծրագիրներէն՝ սերմերու տրամադրումէն մինչեւ ջերմատներու հիմնում, արեւային վահանակներու տրամադրում:

«Մեր ծրագիրներուն տարողութիւնը ուղղակիօրէն կապ ունի այս դրամահաւաքին՝ ֆոնեթոնի արդիւնքներուն հետ: Որքան արդիւնքները մեծ ըլլան, այդքան մենք կարողութիւն կ'ունենանք յաւելեալ ծրագիրներ իրագործելու եւ այլ ընտանիքներու ձեռք մեկնելու համար»... Ըսաւ Պետրոս Թերզեան:

Ֆոնեթոնի այս տարուան

հովանաւորները կամ, ինչպէս հիմնադրամին մէջ գանտնք կը կոչեն, կնքահայրերը ժամ-Քրիստոֆ Պիւիսոնն ու Սիլվէն Թեսոնն են, որոնք երկար տարիներ կարելին ըրած են՝ Հայաստանի ձայնը լսելի դարձնելու համար:

«Ֆրանսայի մէջ մենք կը ցանկանք օգնել Արցախին եւ Հայաստանին, Արցախի հայերուն, որոնք մշտական վտանգի մէջ են: Եւ որպէսզի անոնք մնան իրենց հողին վրայ, անհրաժեշտ են միջոցներ, նուազագոյն անվտանգութիւն, գիւղատնտեսութեամբ զբաղելու հնարաւորութիւն»... Ժամ-Քրիստոֆ Պիւիսոն, ֆոնեթոն 2022-ի աջակից:

Ֆոնեթոնի նպատակն է բարձրացնել սահմանամերձ բնակավայրերուն կենսունակութիւնը: Գիւղատնտեսական ծրագիրներէն զատ կը նախատեսեն հաւաքուած գումարով իրականացնել նաեւ կրթական ու առողջապահական ծրագիրներ:

«Ես կ'օգնեմ օգնել այն հայերուն, որոնք կը ցանկան վերադառնալ եւ ապրիլ իրենց հողին վրայ՝ չնայած կրկնուող յարձակումին: Ես կը կարծեմ, որ ասիկա իրաւամբ դիմադրութեան եւ մարդկային քաջութեան դրսեւորում է: Բայց իրենց հայրենիքին մէջ ապրելու, զայն վերակառուցելու համար անոնց նիւթական աջակցութիւն անհրաժեշտ է»... Սիլվէն Թեսոն, ֆոնեթոն 2022-ի աջակից:

Աշխուժութիւնը այս տարի գոհացնող է՝ արձանագրեց ֆրանսայի տեղական մարմինի ատենապետ Պետրոս Թերզեանը: 3 օրերու ընթացքին հանգանակուած է 1 միլիոն 230 հազար եւրօ, որ նախորդ տարուան ցուցանիշը արդէն իսկ 15 տոկոսով կը գերազանցէ:

Լիբանանի Մէջ Նշուեցաւ

Շարունակուած էջ 8-էն

նած սկզբունքներուն մասին: «Մեր ղեկավարներու դպրոցէն սորված ենք յարգել մեծերը, ըլլալ պարկեշտ, պարտա ճանաչել հայրենասէր: Մենք մեր կարգին հայրենա սիրութեան ոգին փոխանցած ենք նոր սերունդին

եւ այդ պէս կը շարունակուի մինչեւ օրս», ըսաւ Ընկ. Տագէսեանն ու շեշտեց, որ տիրուհիականները միշտ կ'ըլլան հպարտ, կը դառնան փայլուն առաջնորդներ, շնորհիւ ակումբի ջերմ օժանդակին մէջ իրենց անցած մարդակերտումի ճանապարհին: **ՇԻՐԱԶ ՃԵՐԷՃԵԱՆ**

Թէքեան Աշակուբային Միութիւն

Շարունակուած էջ 14-էն

յիւեանը էտկար ինչատուրեանը, Լիլիթ իսոճայեանը (քանոն), Արմէն Ստեփանեանը (տուտուկ), Ալպերթ Օրտինեանը (տհոլ) եւ Ռոմա Կանեանը (ստեղնաշարային գործիք):

Չարենցի գործերի ընթերցմամբ հանդես կու գայ բեմադրիչ, դերասան, բանաստեղծ եւ ասմունքող՝ Դաւիթ Ասատուրեանը
Երեկոյի գեղարուեստական ղեկավար եւ հանդիսավար՝ Լիլիթ Քէհէեան:

Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի Հանդիպումը Լիւքսեմպուրկի Կաթողիկէ Առաջնորդին Հետ



Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան Նիդերլանտներու եւ Լիւքսեմբուրկի մէջ ՀՀ դեսպան Տիգրան Պալայեանի ուղեկցութեամբ Նոյեմբերի 17-18-ին այցելեց Լիւքսեմպուրկի Մեծ Դքսութիւնը:

Նոյեմբերի 17-ի երեկոյեան Սրբազանը եւ դեսպան Պալայեան առիթ ունեցան հանդիպելու եւ զրուցելու երկրի հայ համայնքի շարք մը ներկայացուցիչներու հետ: Յաջորդ օրը առաւօտեան անոնք այցելեցին Լիւքսեմպուրկի Կաթողիկէ Եկեղեցւոյ առաջնորդարանը, ուր հիւրընկալուեցան Լիւքսեմպուրկի Արքեպիսկոպոս՝ Կարտինալ Ժան-Գլոս Հոլբրիխի կողմէ:

Հանդիպման հիմնական նպատակն էր՝ քննարկել Լիւքսեմպուրկ քաղաքի կաթողիկէ եկեղեցիներէն մէկու առջեւ հայկական խաչքարի գետեղման առնչուող հարցեր:

Ջրոցի սկիզբը Սրբազան Հայրը Վեհափառ Հայրապետի ողջունները եւ էջմիածին այցելելու հրահրեց փոխանցեց, ինչի համար Կարտինալը իր շնորհակալութիւնը յայտնեց, փափաքելով այցելել լախարհի առաջին քրիստոնեայ երկիրը:

Սրբազանը իր երախտագիտութիւնը յայտնեց եւրոպական ամենափոքր երկրին, ուր կաթողիկէ բնակչութիւնը շուրջ 87% կը կազմէ,

Հայաստանի հանդէպ ցուցաբերած դրական դիրքորոշման, զօրակցութեան եւ բարեացակամ յարաբերութիւններու համար:

Խաժակ Սրբազան տեղեկացուց Կարտինալ Հոլբրիխին, որ 2018 թուականէն կը նախագահէ Եւրոմիութեան Կաթողիկէ Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց Ժողովը (COMECE)՝ վերջերս ստեղծուած Եւրոպայի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Եպիսկոպոսաց Խորհուրդի մասին: Ան ընդգծեց, որ նորաստեղծ խորհուրդի առաջիկայ նպատակներէն է երկխօսութիւն սկսիլ COMECE-ի հետ՝ հովուական եւ հասարակական հարցերու շուրջ: Կարտինալ Հոլբրիխը ուրախութեամբ ընդունեց առաջարկը: Սրբազանի խնդրանքը՝ եկեղեցի տրամադրել հայ համայնքի հոգեւոր կարիքներու բաւարարման համար՝ բարեհաճութեամբ եւ պատրաստակամութեամբ ընկալուեցաւ Լիւքսեմպուրկի կաթողիկէ առաջնորդի կողմէ:

Ջերմ եւ բարեկամական մթնոլորտի մէջ ընթացող զրոյցի աւարտին, Սրբազանը որպէս յուշ, փոխանցեց բարձրաստիճան հոգեւորականին Մայր Աթոռ էջմիածինէն բերուած «Տիրամայրը Մանկան Հետ» փայտէ սրբապատկերը:

ԹԷՔԷԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
75-ամեակի Տօնակատարութիւն

Հովանաւորութեամբ՝
Ամերիկայի Արեւմտեան
Թեմի Բարեջան Առաջնորդ՝
Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի

Մասնակցութեամբ՝
ԹՄՄ-ի Միացեալ Նահանգներու եւ Գանատայի
Կեդրոնական Վարչութեան
Նախագահութեամբ՝
Տիար Նազարէք Գեւորեանի
Բանախօս՝
Տոքթ. Միմոն Միմոնեան


Տեղի կ'ունենայ Կիրակի, Դեկտեմբեր 4, 2022
Երեկոյեան ժամը 5:00-ին

ԹՄՄ Պէշկէթփիւրեան Կեդրոնին մէջ
1901 N. Allen Ave., Altadena, CA 91001

Չեր տեղերը ապահովելու համար,
E-mail: tca75thanniversary@gmail.com

Գեղարուեստական Յայտագիր
Պիւքէ Հիւրասիրութիւն Հրատը

Նոր Գիրք՝ Իսթանպուլի Հայութեան Մասին



Ինչպէ՞ս կ'ապրին Թուրքիոյ հայերը, ի՞նչ խնդիրներ, մտահոգութիւններ ունին, ինչպէ՞ս հնազոյն Պոլիս քաղաքին մէջ կը պահպանուին հայերէնը, հայկական մշակոյթը եւ ի՞նչ ջանքեր կը գործադրեն տեղի հայերը՝ ազգային դիմագիծը չկորսնցնելու համար: Ինչո՞ւ աջտեղ ապրող հայերէն ոմանք կը զերազասեն թրքերէն խօսիլ, իրենց երեխաները ուղարկել օտար դպրոցներ, ի՞նչ գին ունի անվտանգութիւնը: Լրագրող, հրապարակախօս Սաֆօ Արեան բազմիցս շփուած է իսթանպուլի հայութեան հետ՝ փորձելով անոնցմէ ստանալ այս հարցերու պատասխանները: Ան Պոլսոյ մէջ՝ իսթանպուլաբնակ 33 հայու հետ կատարած իր հարցազրոյցները ամփոփած է գիրքի մէջ՝ փորձելով մէկ հարթակի վրայ լսելի դարձնել հայութեան ամենատարբեր խաւերու ձայնը:

Վաւերական նշանակութիւն ունեցող գիրքը գրուած եւ հրատարակուած է հայ-թրքական յարա-

բերութիւնները կարգաւորելու՝ Հայաստանի եւ Թուրքիոյ գործադրած ջանքերու եւ անկէ բխած մթնոլորտի պայմաններուն մէջ, եւ գիրքին մէջ բնականաբար, անդրադարձ կայ նաեւ այդ հարցին: Իսթանպուլի հայերը իրենք կը փորձեն պատասխանել, թէ ի՞նչ կուտայ այդ յարաբերութիւններու բնականոնացումը երկու կողմերուն համար, ի՞նչ դրական եւ բացասական կողմեր ունի, անխուսափելի՞ է արդեօք հարեւաններու հետ հատուկեան երթալու ճանապարհը, թէ՞ այն կարելի է նաեւ անտեսել... Հայաստանի անվտանգութեան եւ իսթանպուլի հայութեան խնդիրներուն առընթեր փորձ եղած է նայիլ «չատ բան տեսած» իսթանպուլահայերու աչքերով, դուրսէն...

«33 ձայն իսթանպուլէն. ինչպէս ճանչցայ պոլսահայութիւնը» խորագրով գիրքը լոյս տեսած է օրերս, Երեւանի մէջ եւ պիտի տարածուի յատկապէս պոլսահայ համայնքով հետաքրքրուողներու շրջանակներուն մէջ:

Քառօրեայ Պատերազմին Ձոհուած Քեարամ Սլոյեանը Եւ Անդրանիկ Ձոհրապեանը Յետմահու Պարգեւատրուեցան «Արցախի Հերոս» Կոչումով



2016 թուականի Ապրիլին տեղի ունեցած Քառօրեայ պատերազմին զոհուած Քեարամ Սլոյեանին եւ Անդրանիկ Ձոհրապեանին յետմահու շնորհուեցաւ «Արցախի հերոս» բարձրագոյն կոչում:

Երեւանի մէջ Արցախի ներկայացուցչութեան մէջ «Ոսկէ Արծիւ» շքանշանները հերոսներու ծնողներուն յանձնեց Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը:

Արցախի հերոս Անդրանիկ Ձոհրապեանի հայրը՝ Ատոմ Ձոհրապեանը, ողջունելով ներկաները՝ նշեց, որ Քառօրեայ պատերազմին իր որդին եւ բոլոր տղաները տուած են իրենց ամենաթանկը՝ կեանքը՝ յանուն հայրենիքին:

«Արցախը մեր սրբավայրն է, եւ երախտիքի խօսք կ'ուզեմ ըսել ի դէմս Արցախի նախագահին՝ Արցախի ժողովուրդին, մեր զաւակներուն կատարած գործն ու սիրանքը գնահատելու եւ արժեւորելու համար: Սա գնահատանք է, արժեւորումն է մեր տղաներու գործած սիրանքին: Իսկ մեզ՝ ծնողներուս, սա կ'օգնէ, որպէսզի կարենանք ապրիլ», ըսաւ հերոսին հայրը:

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանը նշեց, որ 116-րդ դիրքի պաշտպանութիւնը վճռորոշ եղած է 2016 թուականի Ապրիլեան հերոսա մարտի ելքի հարցով:

«Հակառակորդը, չունենալով շօշափելի առաւելութիւն, ընդունեց

Երկարամեայ Իր Աշխատանքին Համար՝ ԲԺԻԿ Գրայր Յովակիմեանը Պարգեւատրուեցաւ Հայրենիքի Շքանշանով



Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանը հիւրընկալեց ԲԺԻԿ Յակոբ Հրայր Յովակիմեանը:

Նախագահին հրամանաւ՝ առողջապահութեան զարգացման գործին մէջ Հայաստանի Հանրապետութեան մատուցած իր բացառիկ ծառայութիւններուն, սրտի բարդ վիրահատութիւններ իրականացնող նորարարական բժշկական կեդրոն ստեղծելուն եւ մեծաթիւ նոր մասնագէտներ պատրաստելուն, բազմաթիւ մարդկային կեանքեր փրկելուն եւ երկարամեայ

անձնուրաց աշխատանքին համար ԲԺԻԿ Յովակիմեանը պարգեւատրուեցաւ Հայրենիքի շքանշանով:

Նախագահ Խաչատուրեանը շնորհակտեց ԲԺԻԿը, բարձր գնահատեց անոր վաստակը եւ մաղթեց քաջառողջութիւն ու յաջողութիւններ:

Նախագահը համոզմունք յայտնեց, որ Հրայր Յովակիմեանը պիտի շարունակէ իր մասնակցութիւնը բերել առողջապահութեան զարգացման գործին մէջ՝ իր փորձն ու գիտելիքները փոխանցելով երիտասարդ սերունդին:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքը Ընդունեց 44-Օրեայ Պատերազմին Վիրաւորուած Զինուորներու Երրորդ Խումբին



Նոյեմբեր 16-ին-ին, Երուսաղէմի հայոց պատրիարք տէր Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանը ընդունեց Արցախեան 44-օրեայ պատերազմին վիրաւորուած զինուորներու երրորդ

խումբին: Այս մասին ֆէյսպուքեան իր էջին վրայ յայտնեց Երուսաղէմի հայոց պատրիարքարանի դիւանապետ Կորիւն վարդապետ Պաղտասարեանը:

զինադադարի պայմանները, եւ այդ մեր հերոս տղաներուն շնորհիւ: Ես կը խոնարհիմ իրենց առաջ: Այս պարգեւատրութեան արարողութիւնը վաղուց ծրագրած էինք եւ մեր եզտի Քեարամի պարգեւատրումը կը փափաքէինք իրականացնել եզտիներու Ազգային որեւէ մեծ սօնի ընթացքին իրենց հայրենակիցներուն ներկայութեամբ, բայց, կարծես, ամէն անգամ որեւէ բան կը խանգարէր: Այսօրուան ընտրուած վայրն ալ ոչ-պակաս խորհրդանշական է. այն տեղի կ'ունենայ Արցախի Հանրապետութեան Երեւանեան ներկայացուցչութեան գրասենեակին մէջ: Սա Արցախի ժողովուրդին շնորհակալութիւնն է բոլոր մեր հերոսներուն եւ մեր եզտի եղբայրներուն ու քոյրերուն», ըսաւ Արայիկ Յարութիւնեանը:

Արցախի հերոս Քեարամ Սլոյեանի աւագ եղբայր Համիկ Սլոյեանը իր խօսքին մէջ նշեց, որ միշտ հպարտութիւն զգացած են իրենց եղբոր սիրանքով:

«Միշտ հպարտացած ենք ոչ միայն Քեարամի՝ այլեւ մեր բոլոր հերոսներով, քանի որ Քեարամի դէպքէն յետոյ սահմանին զոհուած իւրաքանչիւր զինուոր մեզի համար Քեարամ է: Իսկ կոչում շնորհելը կը կարեւորուի անով, որ իրենց ըրած հերոսութիւնը կը գնահատուի», ըսաւ ան:

Համիկ Սլոյեանը պատմեց, որ իր որդին անուա նակոչած է եղբոր անունով, չնայած անոր, որ եղբոր բաց ոչինչ կը լրացնէ, բայց կը փորձեն անոր կարօտը եւ բացը լրացնել փոքրիկ Քեարամով:

Առցանց Մանկապատանեկան Գրականութիւն 3աւելուածներ եւ Կայքեր



ՎԵՐԺԻՆ ԵՒ ԿԱՐՕ ԱՔՐԱՅԱՍԵԱՆ

Յաճախ կը լսենք ու կը կարգանք, թէ որքան կարեւոր է մանկապատանեկան գրականութիւնը հայ նոր սերունդի հայեցի դաստիարակութեան համար: Դժբախտաբար սակայն անբաւարար են այդ մարզին մէջ աշխատանքի նախաձեռնողները, եւ հազուադէպ՝ մասնագէտները: Պատճառը, կ'անգիտանանք, բայց կը հաւատանք, որ եթէ ընթերցասէր սերունդ մը կ'ուզենք պատրաստել, պէտք է փոքր տարիքէն մանուկները վարժեցնենք ընթերցելու՝ անոնց տրամադրելի դարձնելով բազմաբնոյթ գրականութիւն, դաստիարակչական խաղեր, տպագրուած կամ առցանց միջոցներով:

Այս յօդուածով պիտի փորձենք անդրադառնալ վերջին 10 տարիներուն պատրաստուած մանկական եւ մանկապատանեկան գանազան առցանց յաւելուածներու եւ կայքերու: Համացանցի մեր դարուն, երբ տպագիր թերթեր կը դադրին՝ իրենց տեղը զիջելով առցանց տարբերակներու, մանուկներու եւ պատանիներու ուղղուած նախաձեռնութիւններուն մեծ մասը բնականաբար ստեղծուեցաւ առցանց գործածութեան համար՝ բջջային հեռախօսներու յաւելուածներու եւ կայքերու միջոցով:

Այսու, կը փափաքինք նշել արեւմտահայերէնով պատրաստուած հետեւեալ յաւելուածներն ու կայքերը:

- Յաւելուածներ (applications)
- World of colors - Գոյներու Աշխարհ
- PTIT - Փթիթ
- World of shapes - Ձեւերու Աշխարհ
- Gus On the Go
- World of letters - Գիրերու Աշխարհ
- World of numbers - Թիւերու Աշխարհ
- Կայքեր (websites)
- www.pokrig.org
- www.armlands.com
- www.teaov.org ԺՊԻՏ պարբերաթերթի PDF
- www.lalanouaran.com/hy
- www.soundcloud.com/a-sarkissian
- www.aghvorpaner.com
- www.e-ptit.com

Վերոյիշեալներուն կողքին Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի (ԳԿՀՀԲ) հովանաւորութեամբ՝ youtube-ի վրայ ստեղծուած է երդիք տեսերիզներու շարքը, թէ՛ մանուկներու (Ալուլ Տուկուլ) եւ թէ՛ պատանիներու (Ալինիա Բալնիս) համար: Նաեւ ԳԿՀՀԲ-ի հովանաւորութեամբ ստեղծուած է Գիւտ մը Նիւթ մը գիտական տեսերիզներու շարքը: Youtube-ի վրայ կարելի է գտնել նաեւ մանուկներու համար բազմաթիւ տեսերիզներ եւ հեքիաթներ, որոնց մասին ամբողջական տեղեկութիւն եւ ալլազան աղբիւրներ կարելի է քաղել ԳԿՀՀԲ-ի Ձեռնուկ (www.zndoog.com) եւ ՀԲԼՄ-ի Ատլաս (www.agbuatlas.org.wa) տեղեկատու կայքերէն:

Տեղին է նշել, որ ԳԿՀՀԲ-ի պատասխանատուները արեւմտահայերէնի պաշտպանութեան եւ գոյատեւումի ի խնդիր իրենց այլազան ծրագրերնուն մէջ մեծ կարեւորութիւն կ'ընծայեն ժամանակակից մանկապատանեկան գրականութեան ծանօթ գիրքերու թարգմանութեան ու արեւմտահայերէն լեզուով հրատարակութեան: Այս ծիրին մէջ Ջարդիս մատենաշարով Փարիզի «Նոր Յառաջ»-ի գործակցութեամբ ցարդ հրատարակուած է 6 գիրք:

Իսկան է, որ գործող բոլոր մանկապատանեկան կայքերն ու յաւելուածները արժանանան բացառիկ ուշադրութեան, ունենան կանոնաւոր նիւթական յատկացումներ, որպէսզի աւելի արագ յաճախականութեամբ թարգմանեն իրենք-զիրենք՝ թէ՛ բովանդակութեան եւ թէ՛ մատուցման գործիքներու առումով: Գաղտնիք չէ, որ մանուկներ եւ պատանիներ շուտ կը ձանձրանան. անոնք անընդհատ նորութեան եւ փոփոխութեան հետամուտ են՝ ի տարբերութիւն տարեցներու: Ուստի իրենց հրամցուող ամէն ինչ պէտք չէ «հինալ», այլ կանոնաւորաբար հարստանայ ու բարելաւուի:

Արեւմտահայ մանկապատանեկան մարզին մէջ ցարդ կատարուածը գնահատելի է, մանաւանդ եթէ բաղդատենք երկու տասնամեակ առաջուայ վիճակին, սակայն բաւարար չէ: Հարկ է, որ այդ կարեւոր մարզը նոր նախաձեռնութիւններով հարստանայ, որպէսզի հայ նոր սերունդը իր տրամադրութեան տակ ունենայ հարուստ հաւաքածոյ մը գիրքերու, պարբերաթերթերու, յաւելուածներու եւ կայքերու՝ այլազան բովանդակութեամբ եւ մատուցման զանազան միջոցներով, որպէսզի մանուկ թէ պատանի հայ ընթերցողը իր նախասիրութեան համեմատ, ընտրանքի առիթ ունենայ կարգալու, խաղալու կամ պրպտելով սորվելու: Որքան ցանկալի է, որ հայ ազգի հարուստ անհատներ ու կազմակերպութիւններ քարակերտումէ աւելի հետաքրքրուին մարդակերտումով եւ յաւելեալ պիւտձէ տրամադրեն ֆինանսաւորելու ծրագրերուն, որոնք կ'օգնեն, որ հայ նոր սերունդը հայտնի ծաղիկ եւ սփիւռքի ձուլարանին մէջ պահէ իր մայրենի լեզուն ու մշակոյթը:

Ընդդիմութիւնը Սինչել Քոչարեանից Չիրաժարուի

Շարունակուած էջ 7-էն

հաշուի նստենք առկայ իրողութիւնների հետ: Եւ յետոյ՝ ի՞նչ է նշանակում՝ «մարդասպան» է. ՌԴ-ն էլ ունի իր հիմնաւորումները, թէ ինչու սկսուեց ռուս-ուքրանական պատերազմը: Ես հիմա չեմ խօսում այդ հիմնաւորումների ճշմարտացի լինել-չլինելու մասին, բայց կարող եմ արձանագրել՝ զարգացումները ցոյց տուցին, որ գործունէնք աւելի խորքային պրոցեսի՝ ՌԴ-Արեւմուտք դիմակայութեան հետ: Մի մոռացէք նաեւ, որ այսօր ՌԴ-ում մօտ 3 միլիոն հայ է ապրում», - ասում է նա:

Յարութիւնեանը Փութինի եւ ՀԱՊԿ միւս անդամ երկրների առաջիկայ այցից որեւէ ակնկալիք չունի, մասնաւորապէս՝ չի կարծում, թէ ՀՀ-ի սուվերեն տարածքի նկատմամբ Ատրպէյճանի ագրեսիային կը տրուի յատակ, կոնկրետ գնահատական: «Չի տրուի նման գնահատական, ես յոյս չունեմ, քանի որ Ատրպէյճանն այսօր Ռուսաստանի, նաեւ ՀԱՊԿ միւս անդամների համար աւելի մեծ կարեւորութիւն ունի, քան դաշնակից Հայաստանը: Թէ ինչու, շատ երկար խօսակցութեան թեմա է», - ընդգծում է նա: «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

“AGBU Arts” Միջոցառումները

Շարունակուած էջ 13-էն

(հարուածային գործիքներ) եւ կակաս (կիթառ): Անոնք կը նախընտրեն իրենց ելոյթները կոչել «միջազգային երաժշտական ճամբորդութիւն», որովհետեւ կը ճամբորդեն աշխարհով մէկ՝ եւ բառացիօրէն եւ փոխաբերական իմաստով, ներկայացնելով փարիզեան վալսերէն եւ արժանիքներն թանկութեան միջնակահարական ցարտաներ, Նէափոլիթան պարեր եւ հայկական ազգագրական երաժշտութիւն:

Փաստօրէնայի ելոյթէն ետք, Երվինեանը անդրադարձաւ ՀԲԼՄ-ի հետ իր ունեցած փորձառութեան մասին եւ ըսաւ. «ՀԲԼՄ-ի Թորոնթոյի մասնաճիւղին կողմէ կազմակերպուած երկու յաջող ներկայացումներէ ետք, հաճելի է գործակցիլ «ՀԲԼՄ Արուեստներու» (“AGBU Arts”) հետ, հասնելով Արեւմտեան ափի հանդիսատեսին, ուր կը գործէ հայահոծ մեծ համայնք: Պատրաստ եմ գործակցելու ՀԲԼՄ-ի հետ եւ ելոյթներ ունենալու Պոսթոնի, Շիքակոյի եւ ՀԲԼՄ-ի ներկայութիւնը վայելող այլ

քաղաքներու մէջ»: «ՀԲԼՄ Արուեստներու» տնօրէն Հայկ Արսէնեանը իր հերթին ըսաւ. «Մենք ոգեւորուած ենք վերադառնալով կենդանի միջոցառումներու եւ ծրագրերու, հիւրընկալելով արուեստագէտներ, ինչպէս Սամուէլ Երվինեանը: Անոր երաժշտութիւնը մեր հանդիսատեսին ստիպեց պահ մը մոռնալու ծանր ժամանակները, որ կ'ապրի մեր հայրենիքը ներկայիս: Ան փայլուն կերպով փոխանցեց հոգեզմայլ գոհունակութիւն իր երաժշտութեան միջոցով, որ միակն է, որ կրնայ հանգստացնել մարդու հոգին: Մենք նաեւ խանդավառօրէն կը շարունակենք մեր գործունէութիւնները, առաջարկելով մշակութային բազմազան միջոցառումներ, հիւրընկալելով հայ եւ ոչ հայ արուեստագէտներ Փաստօրէնայի կատարողական արուեստի ընդարձակ կեդրոնին մէջ, որ յազեցած է արհեստագիտական եւ ձայնային արդիական միջոցներով: Կը սպասուի շատ հարուստ եւ ոգեշնչող մշակութային տարի մը ՀԲԼՄ-ի Արեւմտեան ափի եւ այլ համայնքներու մէջ»:



DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- o JUVENILE DEFENSE o DOMESTIC VIOLENCE
- o ASSAULT & BATTERY CHARGES
- o DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- o VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- o IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- o ROBBERY AND THEFT OFFENSES
- o ASSAULT WITH A DEADLY WEAPON
- o CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- o CRIMINAL THREATS o WEAPON CHARGES
- o DRUG OFFENSES o SEX CRIMES
- o THEFT CRIMES o GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.

LAW OFFICES OF
ALICE TAVOUKJIAN, PC
 www.TAVOUKJIANLAW.com CALL FOR A FREE CONSULTATION
 135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801 **626.386.8606**

ՄԱՅԱԶՊ



ՍՈՆԻԱ ԿԻԻԼՎԱՐԴԵԱՆ (Ծնեալ Հալէպ, Սուրիա Յունիս 16, 1927)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին Սոնիա Կիւլվարդեանի մահը որ պատահեցաւ Նոյեմբեր 7, 2022ին:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի Նոյեմբեր 28, 2022-ին, ժամը 9:30-ին Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ, 6300 Forest Lawn Drive, Los Angeles CA 90068:

- Սգակիրներ՝ Դուստրը՝ Մանիա եւ Ռոպըրթ Արշակունի Հարսը Լիւսի Կիւլվարդեան Թոռները Նինա եւ Մէթիո Լիանա, Նար եւ Լար Ծոռները Ալիք, Այտա եւ Մարօ

Սաքամեանի Թատերական Ուղին

Շարունակուած էջ 14-էն

ընկերներու առաջարկին, կը միանայ Հ.Բ.Ը.Մ.ի շարքերուն որպէս Ամերիկայի գեղարուեստական դեկավար: Ամերիկեան բեմի կորուստը կը դառնայ հայ թատրոնի շահ:

Աւելի քան 40 տարի ան կը պաշտօնավարէ Բարեգործականի մէջ, այդ ճանապարհով ծառայելով հայկական գաղութներուն, ծաղկեցնելով հայ մշակոյթը՝ ընդհանրապէս եւ հայ թատրոնը՝ մասնաւորապէս:

Իր թատերական երկար ուղին լայնօրէն գնահատուած է թէ՛ հայրենիքի, եւ թէ՛ ալ սփիւռքի մէջ: Բազմաթիւ պատուոյ գիրերու եւ շքանշաններու արժանացած է: Երկու գործող թատերախումբեր կոչուած են իր անունով:

Սակայն, ամէն արուեստագետի կեանքը կ'անցնի ելեւէջներէ: Սաքամեանն ալ դիմագրաւած է զանոնք: Յստակ է որ զանազան մարդոց վերաբերմունքը, բայց յատկապէս բարեկամ համարուած անձերու դարանակալութիւնը, խոցած են սիրտը: Բայց ինք անյիշաչար, արագօրէն կ'անցնի այդ դէպ-

քերուն վրայէն, առանց անուններ տալու՝ առանց հաշիւ պահանջելու:

Ահա կեանքի մը պատմութիւնը: Արդար եւ հայրենանուէր կեանք մը, ապրուած բեմի վրայ: Հարուստ եւ ստեղծագործ կեանք մը, որ վաթսուն տարի պայծառ կանթեղ մը եղաւ սփիւռքի տակաւ մթազնոյղ հորիզոնին վրայ: Ջահ մը՝ որ արեւմտահայերէն ճառագայթեց բեմերէն եւ սերունդներ խանդավառեց:

Հաճելի ընթերցումէն ետք, գիրքը գոցելէ առաջ, կարդացողը չի կրնար լուր ցաւ մը չ'զգալ: Ճակատագրի մէկ դաժան խաղն է՝ որ ամբողջ կեանք մը բեմի միջոցաւ Արեւմտահայերէնի պահպանման ու զարգացման համար պայքարելէ ետք, Սաքամեան հարկադրուած կը զգայ իր յուշերը անգլերէն գրելու որպէսզի մատչելի ըլլայ նոր սերունդին: Այն սերունդին, որուն համար ան ճգնջալ՝ տող առ տող, բառ առ բառ թատերական երկխօսութիւն սորվեցնելով: Կոտորացող ցաւ մը որ աւելի՛ ու աւելի՛ կը խոցէ ամեն արեւմտահայու սիրտը:

«Թատերական Ուղեւորութիւնս. Յուշագրութիւն մը» գե-

ղեցիկ գիրք մըն է: Սաքամեանի անձին կամ գործին ծանօթները, շատ մը հին յուշերու կողքին, անոր հարուստ կեանքին նոր ծալքերուն պիտի ծանօթանան: Իսկ անոնք որ բոլորովին անծանօթ են անոր, պիտի կարդան բազմապատակ ու ազնիւ արուեստագէտի մը մասին, որ վաթսուն տարի բեմերէն քաղցրացուց սփիւռքահայ կեանքը:

Հոս հարց մը կը ծագի. ի՞նչն է որ կը մղէ անձ մը դէպի կատարողական արուեստ: Ասպարէզ մը ուր բեմի վրայ գնահատուելու եւ ծափահարուելու գոհունակութենէն շատ աւելի են արհամարուելու, քննադատուելու եւ պախարակուելու հաւանականութիւնը: Գործ մը ուր տուեալ գիշերուան հանդիսատեսին քմահաճոյքէն կախուած ըլլալու մղձաւանջը չի վերանար նոյնիսկ մեծ յաջողութիւն արձանագրած կամ լայն համբաւ վայելող արուեստագէտին համար: Անունանի եւ մրցանակակիր դերասանն ու երգիչն անգամ ամեն ելոյթէն առաջ չեն կրնար որոշ անձկութենէ մը խուսափիլ: Ուրեմն ինչո՞ւ մարդ ինքզինք այս մղձաւանջին առջեւ կը դնէ: Յստակ է թէ այս մարդիկը ունին ներքին մղում մը, խլրտում մը, յորդող պահանջ մը, անզսպելի կիրք մը՝ արտադրելու, կերտելու, ստեղծագործելու:

Սիրելիներ, Ամերիկեան համալսարանի իր տիտղոսը փայլուն հեռանկարներ կը բանար Սաքամեանի առջեւ: Կրնար գործարար մը ըլլալ եւ մեծ յաջողութիւն ձեռք բերել, ապրիլ շուկայութեան մէջ, արուեստէ հեռու: Անգլիական եւ ամերիկեան բեմերու յաջող մուտքէն ետք բեմական ասպարէզի լայն հորիզոններ կային իր առջեւ: Բոլոր տուեալները ունէր օտար բեմերէն փայլելու եւ բարձր դիրքերու հասնելու: Սակայն Սաքամեան նախընտրեց սփիւռքահայ բեմը, քաջ գիտակցելով այդ կեանքի կաշկանդումներն ու սահամնափակումները: Ամբողջ վաթսուն տարի ընդլայնեց ու ծաղկեցուց հայ թատրոնը: Հմայեց ու տպաւորեց հանդիսատեսը, բեմէն հնչեցուց առոյգ ու կայտար արեւմտահայերէն մը, քանի մը սերունդ երիտասարդներ մարգեց, բեմ հանեց: Երիտասարդներ, որոնք բեմական շնորհներու

կողքին ճկուն հայերէնի վարժուեցան, աւելի սիրեցին իրենց լեզուն եւ մշակոյթը:

Սիրելիներ, հիմա հոս խելօք-խելօք նստած ծերունագարդ այս մարդը տեսնելով մի՛ խաբուիք: Թերեւս իր վաստակը չճանչցողին համար դժուար ըլլայ պատկերացնել թէ ան 60 տարի ելեկտրականացուց եւ աթոռին ծայրը պահեց հանդիսատեսը: Ժողովուրդը հմայեց իր առոյգ ու կայտար բեմականութեամբ, իր կերտած անմոռանալի կերպարներով՝ Աբխողոմ աղայ, Քամի, մորաքոյր Օկասթա...

Ժամանակը ընդհանուր հաւասարեցնողն է: Տարիքը չի խնայեր ո՛չ մէկուն: Ինչպէս Սաքամեանի մենախոսութիւններէն մէկուն խորագիրը կ'ըսէ՝ «Ինչ էինք, ինչ եղանք»:

Կար ժամանակ երբ Գրիգոր Սաքամեան արքայական իր մուտքով, առաջին իսկ նախադասութեամբ իր ափին մէջ կ'առնէր հանդիսատեսը, եւ նոյնանալով իր կերպարին հետ, մինչեւ վերջին վայրկեան զսպանակի մը ճկունութեամբ կը տարուբերէր անոնց հոգիները՝ մէկ լիհազագ խնդրով կը լեցնէր սրահը, մէկ անհուն յուզումով կը շարժէր մարդոց սրտերը: Սաքամեանի բեմական արուեստը անմիջական էր, խորիմաստ եւ ներգործիչ: Իր խաղընկերներուն հետ կը կազմէր ներդաշնակ ամբողջութիւն մը, կը բարձրացնէր զանոնք այնքան մը՝ որ զգալի չէր ըլլար թէ արհեստավար կը կիսէր ոչ-արհեստավար դերասաններու հետ: Իր արժանիքն էր դերասաններէն ցմրուր քամելու եւ բեմին վրայ արժեւորելու անոնց կատարողական ձիւքերն ու կարելիութիւնները:

Եւ հիմա բեմին ու իր ազգին պարտքը արդէն լիուլի կատարած ըլլալու գոհունակութեամբ, խիղճը հանդարտ, երբ Սաքամեան կը վայելէ արդար հանգիստը, կուգանք խոնարհելու իր արդար վաստակին առջեւ ըսելով՝ վարձքդ կատար, վարպետ:

Խօսուած Գրիգոր Սաքամեանի »Թատերական Ուղեւորութիւնս. Յուշագրութիւն մը« գիրքի շնորհակցումը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel:-----
Email: -----

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...
Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

Քարիմ Բենգեման Վնասուածքի Պատճառով Պիտի Չի Մասնակցի Աշխարհի Բաժակին



Ֆրանսայի ֆուտբոլի հաւաքականի անդամ, «Ոսկէ Գնդակի» դափնեկիր եւ Մատրիտի «Ռեալի» յարձակող Քարիմ Բենգեման պիտի չկարողանայ մասնակցիլ Աշխարհի Բաժակի մրցումներուն՝ վնասուածքի պատճառով:

«Ձախ ազդրի քառագլուխ մկաններու վնասուածքի պատճառով Քարիմ Բենգեման ստիպուած է հրաժարիլ աշխարհի առաջնութեան մասնակցելէ: Ամբողջ խումբը կը կիսէ Քարիմի վիշտը եւ կը ցանկայ շուտափոյթ ապաքինում», - կ'ըսուի հաւաքականի հաղորդագրութեան մէջ: Նոյեմբերի 19-ին Բենգեման վերադարձած էր ընդհանուր խումբի մարզումներուն, սակայն նոր վնասուածք ստացած էր:

Ֆրանսայի ֆուտբոլի ազգային խումբը՝ աշխարհի այժմու ախոյեանն է:

Իրանցի Ֆուտպոլիստները Հրաժարած Են Երգել Երկրի Օրհներգը՝ Ի Աջակցութիւն Իրանցի Ցուցարարներուն



Ֆուտպոլի Աշխարհի Բաժակի Անգլիա-Իրան խաղէն առաջ իրանցի ֆուտպոլիստները հրաժարեցան երգել երկրի օրհներգը՝ ի աջակցութիւն երկրին մէջ ընթացող ցոյցերու մասնակիցներուն: Խալիֆա միջազգային մարզադաշտին վրայ օրհներգերու ժամանակ իրանցի ֆուտպոլիստները լռած էին, ինչ որ ստացած է մարզադաշտին մէջ գտնուող իրանցի համակիրներու աջակցութիւնը: Իրանական պետական հեռատեսիլը չէ ցուցադրած այդ հատուածը:

Խաղէն առաջ հաւաքականի ֆուտպոլիստ էհսան Հաջսաֆին յայտարարած է, որ ֆուտպոլիստները կ'աջակցին եւ կը համակրին իրանցի ցուցարարներուն: Մէկ այլ ֆուտպոլիստ՝ Ալիուեզա Ջահանբակը խաղէն առաջ ըսած է, որ չեղբելու որոշումը առած են միասին:

Մեսսին 2023 Թուականին Կարող Է Միանալ «Մանչեսթըր Սիթիին»

Անգլիական «Մանչեսթըր Սիթի» ֆուտպոլային ակումբը յաջող տարի՝ 2023 թուականին, կարող է ձեռք ձգել ֆրանսական ՊՍԺ-ի յարձակող Լիոնել Մեսսիին: Այս մասին կը գրէ El National-ը: «Սիթիին» ղեկավարները կ'ուզեն, որ 35-ամեայ արժենթինցի յարձակողական եռեակ կազմի էրլինկ Հոլանտի եւ Քեւին Ծէ Պրեյնէի հետ: Խումբը կը գլխաւորէ Խոսեպ Կուարտիլան:

Մեսսին, առայժմ կը դիտարկէ արհեստավարժ գործը շարունակելու երկու տարբերակ՝ ՊՍԺ-ի հետ պայմանագրի երկարաձգում կամ վերադարձ գաթալոնական «Պարսելոնա», որ կը գլխաւորէ անոր ընկերը եւ նախկին խմբակից Ջաւին: Արժենթինցի պէտք է վերջնական որոշում կայացնէ ֆուտպոլի Աշխարհի Բաժակի աւարտին:

Աւստրիայի Հաւաքականը 62 Տարուան Մէջ Առաջին Անգամ Յաղթած Է Իտալացիներուն

Ֆուտպոլի Աւստրիոյ հաւաքականը ընկերական խաղի ընթացքին 2:0 արդիւնքով իր դաշտին վրայ պարտութեան մատնած է Եւրոպայի ախոյեան Իտալիայի հաւաքականը Գսպլեր Շլակերի եւ Տաւիտ Ալպպայի կողմերուն շնորհիւ:

Աւստրիացիները նախորդ անգամ Իտալիոյ ազգային խումբին յաղթած էին 1960 թուականին:

62 տարուան մէջ 14 անգամ Աւստրիացիները պարտուած են Իտալիոյ խումբէն 1960-ի 2:1 արդիւնքով յաղթելէ ասդին:

Իտալիոյ եւ Աւստրիայի հաւաքականը չկարողացան հասնիլ Քաթարի մէջ ընթացող Աշխարհի Բաժակի աւարտականներուն:

Հայաստան Հաւասարեցաւ Քոսովոյին Հետ, Պարտուեցաւ Ալպանիայէն

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը անցեալ շաբաթ ունեցաւ երկու ընկերական հանդիպումներ՝ մրցակիցներու դաշտերուն վրայ:

Առաջին խաղին Հայաստան հաւասարեցաւ Քոսովոյի հետ՝ 2:2 արդիւնքով, երբ դաշտի տէրերը կարողացան աւելացուած 3-րդ վայրկեանին նշանակել հաւասարութեան կողմը:

Երկրորդ ընկերական հանդիպումը կայացաւ Թիւրանայի մէջ, ուր Ալպանացիները առաւելութեան հասան 2:2 արդիւնքով:

Սեպտեմբերի 29-էն ի վեր, երբ Խոսեպ Կապուսը հեռացաւ մարզիչի պաշտօնէն, Հայաստանի խումբը առանց գլխաւոր մարզիչի է: Այժմ գլխաւոր մարզիչի ժամանակաւոր պաշտօնակատարն է Ռոման Բերեզովսկին:



Հայ Ըմբիշները 2 Մետալ Նուաճած Են Նիւ Եորքի Մէջ

Ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականի անդամներ Արման Անդրէասեանն ու Արման Աւագեանը մետալներ նուաճած են Նիւ Եորքի մէջ կատարուած Պիլ Ֆարելի յուշամրցաշարին, կը հաղորդէ ՀԸՖ-ի մամուլի ծառայութիւնը:

74 քկ ծանրութեան դասակարգին մէջ Արման Անդրէասեանը դարձած է արծաթէ մետալակիր, Արման Աւագեանը 79 քկ ծանրութեան դասակարգին մէջ նուաճած է պրոնզէ մետալ:

Մակնուս Գարլսըն Բացառիկ Ցուցանիշով Դարձաւ Champions Chess Tour Finals-ի Ախոյեան

Ճատրակի աշխարհի ախոյեան Մակնուս Գարլսըն բացառիկ ցուցանիշով նուաճեց Champions Chess Tour Finals-ի ախոյեանի տիտղոսը: Նորվեգիացին 7 հանգրուաններուն յաղթեց բոլոր մրցակիցներուն:

Գարլսըն պարտութեան մատնեց ամերիկացի Ուեսլի Սոյին, հնդիկ Արշուն էրիկախիին, ատրպէյճանցի Շահրիյար Մամետիարովին, հոլանտացի Անիշ Գիրիին, վիեթնամցի Լէօ Գուանկ Լիեմին, հնդիկ Պրակնանատհային, լեհ Եան-Գըշտով Տուտային:

Մրցանակային հիմնադրամը 210 հազար տոլար էր: Գարլսըն ստացաւ 50 հազար տոլար:



«Մանչեսթըր Եունայթըտ» Կրնայ Դատական Հայց Ներկայացնել Ռոնալտուի Դէմ

Անգլիական «Մանչեսթըր Եունայթըտը» կրնայ դատական հայց ներկայացնել փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուի դէմ:

Անգլիական ակումբին մէջ չեն ցանկար գործը դատարան հասցնել, սակայն դեռ պատրաստ են նմանատիպ գործընթացի, եթէ յարձակողը հրաժարի պայմանագիրը լուծարելէ: «Մանչեսթըր Եունայթըտ» առաջնահերթ կը նկատէ Ռոնալտուի պայմանագրի ժամանակէն առաջ դադարեցնելը: «Կարմիր սատանաներու» ղեկավարութիւնը չի ցանկանար, որ Ռոնալտուն Քաթարի աշխարհի առաջնութենէն յետոյ վերադառնայ ակումբ, քանի որ կ'աջակցի գլխաւոր մարզիչ էրիկ Տեն Հազի այն կարծիքին, որ փորթուկալացի պէտք է հեռանայ «Մանչեսթըր Եունայթըտէն»:



«Մանչեսթըր Եունայթըտի» յարձակող Կրիշտիանու Ռոնալտուն հարցազրոյց կատարած էր հանրայն լրագրող Փիլս Մորկընին հետ, ուր ան խիստ քննադատութեան ենթարկած էր ակումբի ղեկավարութիւնը եւ խումբի գլխաւոր մարզիչ էրիկ Տեն Հակը: